



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

key

1676

1 copy

~~27~~

1451.

1167

ՄԱՐԻԱՄ ԱՆՈՒՆ
ՄԱՐԻԱՄ

1379.

ՊՐՏԻԿ ԵՎ ԳՆԱՆ ՄԸ

ՊԼՏՄՈՒԹԻՒՆԸ

ՄԱՐՏԻՐՈՍ
ՅԱԿՈՎԼԵԱՆ
ՍԻՆԵՑԵԱՆՑ

ՄԱՐՏԻՐՈՍ
ՅԱԿՈՎԼԵԱՆ
ՍԻՆԵՑԵԱՆՑ



1676



Առ հասարակ յիս, լինողիս և Ռուսիայի
Կոնստանտնուպոլիս, 25:

Ի ՕՍԻՒՄԵՆԸ

Ի Տպարանի Կուլտիւրնոս Կւիթիթի:
1841:

1721

1721

Handwritten scribble

Handwritten scribbles



Մ Ա Ր Ի Ա Մ Ի Ն
Պ Ա Տ Մ Ո Ի Թ Ի Ի Ն Ը :

Գ Լ . Ը :

Մարիամ ծնած էր Պօսթրն Մայրաքաղաքը՝ Վեկտեմբերի տասնիրեք. 1824. անոր ծնողքը բարեպաշտ մարդիկ էին, ու ամէն բանէն էվելի կրցանկային որ իրենց զաւակները երկինքին համար պատրաստը վէին. ուստի աս վախճանին համար՝ մեծ հոգատարութեամբ կը հրահանգէին իրենց զաւակները կրօնքին ճշմարտութեանը մէջ: Մարիամին առողջութիւնը տկար էր, և մայրը սովորականէն էվելի հոգ կը տանէր իր վրայ, ու նաև շատ փափաք ունէր ուսման. անոր համար շատ ուրախութեամբ կը սորվեցունէր իրեն՝ իր մայրը. արգարև աս աղջիկը երջանիկ չէր երևար բնաւ, միայն՝ երբոր պատեհութիւն կունենար իր մայրը իրեն հետ հոգեչահ խօսքերը ընելու. ասանկ ժամանակներ անանկ տեղ մը չի գար՝ որ այնչափ սիրելի ըլ-

լար իրեն , որչափ որ իր սիրելի մօրը քովը նստիլը . աս ճամբով Մարիամ իր մատաղ հասակին մէջ՝ իր վրայովը խորհիլ սորվեցաւ , ու շատ օգտակար գիտութիւն ստացաւ :

Երբոր մայրը սկսեց Մարիամին հետ Աստուծոյ վրայօք խօսիլ , պինտ առաջ մէկ պարզ ու հրապուրիչ եղանակ մը բռնեց . որ կարող ըլլայ Մարիամին սիրտը իրեն ձգելու՝ անոր հոգևոր օգտին համար :

Մարիամ երկու տարւան չեղած՝ երբոր մայրը կրցուցընէր իրեն՝ ծաղիկները , ու ուրիշ տեսակ բաները , իրեն կըսէր որ , Երկինքը Աստուած մը կայ , որ ան ըրեր է բոլոր ան բաները . ու ան՝ մարդասէր ու բարի է . ու նաև կըսիրէ պզտիկ տղաքները . ու ան է՝ որուն որ կաղօթեն իրեն հայրը ու մայրը . երբոր անձրև կուգար , ու հովը կըփրչէր , անոր կըսէր որ , նոյն Աստուածն է , որ անձրև կուտայ մեզի , ու հովը փչելու կըպատճառէ . ուստի պէտք է որ սիրես անիկա , ու վախնաս անկէց . Մարիամ սորվեցաւ ուշ դնել , ասանկ օգտակար հրահանգութիւններու , ու երբոր կարող եղաւ խօսելու , շատ անգամ կըսէր որ , Ինքը կըսիրէ Աստուած , ու կուզէ մէկ աղէկ աղ ջիկ մը ըլլալ , որ կարող ըլլայ երկինքը երթալու :

Մարիամ իրեք տարւան չեղած՝ երբոր ընտանեացը մէջ Աստուածաշունչ կըկար-

դացվէր , ու աղօթք կըլար , շատ դիտողութիւն կընէր , ու հանդարտ կըկենար . ու բնաւ չէր ուզեր խաղի վերաբերեալ բաներու հետ ըլլալ նոյն ժամանակը . այլ մանաւանդ իր երևոյթէն յայտնի կերևար որ , շատ ուշագրութիւն կընէր զուրցըվածներուն . ու նաև շատ կըբաղձար որ սուվորական աղօթքին ժամանակը կրկին դառնար , որ կարող ըլլայ նորէն լսելու Աստուծոյ , ու երկինքին վրայօք :

Անգամ մը երբոր իր ծնողքը դուրս գացած էին տունէն , սուվորական աղօթքին ժամանակը գալուն պէս՝ Մարիամ տանը հոգաբարձուին հարցուց թէ , Մեզի հետ աղօթք չի պիտի ընէք . մեր տանը մէջ աղօթք չի պիտի ըլլայ հիմայ ծնողքս տունը չըլլալուն համար . երբոր տեսաւ թէ իր հարցումը պարապը ելաւ , կրկին հարցուց թէ , անոնց համար աղօթք չես ըներ , որ Աստուած խնամէ անոնք , ու դարձեալ տուն բերէ անվնաս . վերջապէս իր սիրտը չի հանդարտեցաւ , մինչև որ իր բաղձանքը չի կատարվեցաւ , ու իր ծնողքը չի յիշվեցաւ աղօթքին մէջ :

Մարիամ տղայութեան ժամանակէն մէկ աղնիւ բնաւորութիւն մը ունէր իր ծնողքը պատուելու . ու հաճելի ընել անոնք՝ իր ամէն բրածներուն մէջ . ու նաև անանկ կատարեալ հնազանդութիւն մը ունէր , որ բոլոր զինքը տեսնողներուն մեծ զուարճութիւն կըպատճառէր :

Մարիամ չըսպասեց որ իր հայրը ու մայրը ըսեն իրեն , թէ ինչ պէտք է ընել , կամ չընել . հապա ինքը մեծ զգուշութեամբ կրնէր ան բանը , որն որ կըխորհէր որ հաճելի պիտի ըլլայ անոնց : Ինքը քանի որ մեծցաւ՝ անանկ փափաք մը ունեցաւ ուրիշները գոհ ընելու , որ աս փափաքը անանկ մէկ հաստատուն ունակութիւն մը եղաւ իրեն , որ բոլոր իր մերձաւորներուն մեծ հաճութիւն կըպատճառէր . ու նաև աս ունակութիւնը մէկ գլխաւոր պատճառ մը եղաւ իրեն՝ զինքը երջանիկ ընելու :

Եւտու մը՝ մայրը տեսաւ որ , Մարիամ շատ ջանք ունէր իրեն օգնելու , իր գործքերուն մէջ , ու գործը լմրննալէն ետե՛ ինքըզինքնալ մաքուր մը զարգարեց , ու հարցուց մօրը թէ , մաքուր կերեամկոր մի . աս հարցումով իսկոյն կրկնեց խօսքը՝ ըսելով թէ , Եստուածաշունչը առնեմ , ու քիչ մը իս կըկարդացունեն մի . մայրը թէպէտ զարմացաւ աս հարցումին , սակայն Եստուածաշունչը կարդալուն սովորական ժամանակը ըլլալուն համար , սկսեց կարդալ անոր հետ . և որովհետև Մարիամ ինքնին չէր կրնար կարդար , անոր համար մայրը անոր ձեռքը տըւաւ Եստուածաշունչը , ու ինքն ալ ետեը կայնեցաւ , ու քանի մը տուն բան կարդաց անոր հետ , որ Մարիամ սրտի մտօք կարդաց իր մօրը հետ , ընթերցմունքը լմրննալէն ետե՛ Մարիամ

երգ մը ըսաւ , որն որ սորված էր , վերջը նորէն հարցուց թէ , աղօթք ընե՞մ մի . աղօթքը լմնցունելէն ետե դարձեալ հարցուց թէ , Մտուծոյ ծառայութիւն ընելուն կերպը ան է մի . դուն ալ ասանկ կընես մայր , իմ պղտիկ քոյրս՝ որ երկինքը գնաց , ան ալ ասանկ կընէ՞ր մի :

Մարիամ պղտիկ քոյր մը ունէր , որ քիչ մը ժամանակ առաջ մեռած էր . իր կենդանութեանը՝ իր ծնողքը շատ հրահանգեր էր զինքը , ու շատ ժամանակ ալ բան խօսված էր ընտանեաց մէջ՝ երկինքը երթալու վրայօք . Մարիամ լսելով աս հոգևոր հրահանգութիւնները՝ շատ բաղձանք ունէր ամէն բան շիտակ ընելու , որ ինքն ալ կարող ըլլայ ան փառաւորեալ աշխարհին համար պատրաստուիլու :

Մարիամին դէմքին վրայ անանկ պարկեշտութիւն մը կար , ու իր վարքին մէջ անանկ յատկութիւն մը՝ որ արդարեւ զարմանալի բան մըն էր , իր պղտիկութեանը նայելով . ինքը թէպէտ աշխոյժ բնաւորութիւն ունէր , ու խաղալ ալ կըսիրէր , սակայն անարգ , ու ձայնով եղած խաղեր չէր խաղար , ու նաև խաբէութիւն եղած խաղերու մէջ չէր գտնուէր : Երբոր իր ընկերները իմացան անոր ասանկ պարկեշտ ու ճշմարտախօս ըլլալը՝ երբեմն կուզէին որ իրենց խաղարկութեանը մէջ առնել անկա , երբեմն ալ կըյորդորէին զինքը , որ

անանկ բան մը ըսել տան իրեն , որն որ արժանաւոր չէ ըսել . սակայն ինքը չէր հաճեր անոնց բռնած անպատեհ ճամբային , ու կը թողուր անոնք , ու մօրը քովը կերթար . ու թէ որ մայրը տունը եղած չըլլար , էվելի նախապատիւ կընտրէր մինակ նստիլ , քան թէ անանկ բան մը ընել , կամ ըսել , որն որ անարժան կը համարէր ինքը : Անգամ մը որ դեռ պզտիկ էր , իրեք ժամի չափ մինակ տունը կեցաւ , ինչու որ չէր ուզեր ընկերանալ անոնց հետ , որոնք որ անպարկեշտ կերպով կըխօսէին :

Մարիամ երբոր չորս տարւան եղաւ սկսեց զպրատուն երթալ . իր առաջին վարժապետը ըսեր էր որ , ան մէկ հանդարտ , ու հնազանդ աշակերտ մըն է . ու ինքը չէր տեսած անոր յանդիմանութեան արժանի , կամ անիրաւ գործ մը ընելը . հապա ուշադրութեամբ մտիկ կընէր՝ բոլոր իրեն զուրցրվածներուն . ու նաև շատ առաջ գացած էր հաւատոյ հրահանգութեանը մէջ :

Աւրիշ վարժապետ մը ըսեր էր . առաջին անգամին երբոր տեսայ Մարիամ , դեռ չորս տարւան էր , ու ան իր տղայութեան հասակին մէջ՝ շատ անգամ իս զարմացուցած էր՝ հաւատոյ վերաբերեալ բոլոր բաներուն մէջ այնչափ բաղձանք ցուցնելուն համար . ինքը շատ անգամ ինծի կուգար . ու մէկ զուարթ դէմքով մը կըսէր , կը-

կամիս կարգալ ինծի ինչ որ Յիսուս ըսաւ
 պղտիկ տղոցը . ու ինծի ալ հետդ ըսել
 կուտամ՝ որ ես ալ սորվիմ անիկա : Երբոր
 կը հաճէի իր խնդիրքը կատարելու , ինքը
 կը հարցունէր . չիմայ Յիսուս պղտի տղա-
 քը կը սիրէ՞ մի , ու ինծի նոր սիրտ մը պիտի
 տայ մի , թէ որ խնդրեմ իրմէն . չեմ
 կրնար մոռնար բնաւ , որ առտու մը զու-
 արթ դէմքով մը դպրատուն մտաւ , ըսելով
 թէ՛ Պէտքը չէ որ անդամ մըն ալ կարգաս
 ինծի անիկա . ինչու որ բոլորը սորվեցայ ես .
 ու ինքնին կրնամ ըսեր . ու ես միշտ կը
 խորհիմկոր անոնց վրայօք :

Դեռ հինգ տարվան շեղած քանի մը ա-
 միսի չամի՝ կերևար որ նոր սիրտ մը փնտը-
 ուելու վրայ էր . առտու մը՝ որ մտքին աս
 վիճակին մէջն էր , ու հայրը Մստուածա-
 շունչ կը կարգար ընտանեաց մէջ՝ ինքը
 կերթայ հօրը քովը կը կայնի , ու կը սկըսի
 արտասուել . հայրը կը կարծէ , թէ իր ա-
 թոռը իրեն դըպաւ , ու մէկ տեղը վնասե-
 ցաւ . ուստի հարցուց իրեն , թէ նստիլ
 չո՞ղեր մի արդեօք . չէ հայր ըսաւ ինքը ,
 ու կամաց մը սրբեց իր արցունքները . նոյն
 օրը՝ երբոր մօրը հետ մինակ էր , ըսաւ ա-
 նոր . Մայր , աս առտու դուք կարծեցիք
 որ , ես վնասեցայ , հօրս կարգալու ատենը
 սակայն անանկ չէ . ես ստուգիւ գիտնալ
 կուտեմ , թէ արդեօք նոր սիրտ մը ստացայ

ծի . մայրը կը հարցունէ , թէ՛ Ինչո՞ւ կուզես
որ կարգամ քեզի անիկա . Մ'արիամ ըսաւ
իրեն , Ես կուզեմ էվելօք լսել ան երկնայ-
ին աշխարհին վրայ , ան գլուխը՝ որն որ
ինքը այնչափ կը սիրէր , յայտնութեան
քսանըմէկերորդ գլուխն էր . որ ան՝ վերջը
այնչափ սիրելի եղաւ իրեն , ու վերջին տա-
նը վերջին մասը շատ անգամ կը լսի շատակէր
իր աղօթքին մէջ . շատ անգամ կաղօթէր ,
որ իր անունը գրվի կենաց Գառին գրքին
մէջ . ու նաև կը մաղթէր որ նոյնպէս բոլոր
ընտանեաց մէջ գտնուին յոյններուն , ու ուրիշ
բարեկամներուն անունները գրվին ան կե-
նաց Գառին գրքին մէջ : Այոն օրը ողջոյն՝
ուզեց որ ան գլուխը կարդացվի իրեն , որն
որ առտրվան պաշտամունքին ժամանակը
կարդացվեր էր :

ԳՂ . Բ :

Երբոր Մ'արիամ հինգ տարեկան ըլլա-
լու մօտեցաւ , 1829 ին , աշունին ժա-
մանակը՝ մէկ երկարատե հիւանդութիւն
մը եկաւ վրան . ուստի ան պատճառաւ՝ իր
յօժարութեամբը ղինքը Աստուծոյ կամացը
յանձնեց . ու անկէց ետե սկսեց առջինէն
էվելի մէկ յատուկ զգուանք մը . զի
աշխարհային բանք

մը՝ հոգևոր բաներուն վրայ, որչափ որ իր կարողութիւնը կրկնեցունէր: Վրեթէ ամէն օր մօրը կըսէր, թէ սիրելի մայրս, կըբաղձամ որ Մատուած մէկ բարի քրիստոնեայ մը ընէ իս. ես կուզեմ որ Մատուած իմ չար սիրտս վերցունէ վրայէս, ու մէկ նոր սիրտ մը տայ ինձի. ես կուզեմ իմ պղտիկ քրոջս պէս ըլլալ, որն որ երկինքը գնաց. ո՛հ մայր, աղօթք կընես ինձի համար:

Քանի մը շաբաթէն ետև՝ Մարիամ քիչ մը ըւրնտցաւ, ու կարող եղաւ դըպրատուն երթալու, որ բոլոր ան ձմեռը երբեմն երբեմն կերթար:

Մարիամ շատ աղօթք կընէր, ու շատ ալ կըսիրէր աղօթք ընելը. երբոր մէկ կարօտեալ աղքատ մը իյնար միտքը, կամ դրացիներուն մէկը մշտացած ըլլար, կամ ինքը իր խղճին դէմ բան մը զգացած ըլլար, և կամ իր եղբայրները ու քուրերը անիրաւ բան մը ըրած ըլլային, իսկոյն կառանձնանար, ու առանձին աղօթք կընէր. աս իր հաստատուն բնաւորութիւնն էր, և ասանկ ընելէն յայտնի կերևար որ ինքը մեծ մխիթարութիւն մը, ու խաղաղութիւն մը ստացած էր իր մտքին մէջը:

Երբոր առարկները կարթըննար, կերևար, թէ իր առջի խորհուրդները իր երկնաւոր մօրը համար արթընցեր էին, ու մինչև որ շնորհակալութիւն չի տար

Մատուծոյ՝ իր բրած բարութիւններուն
 համար, ու չի խնդրեր Մատուծոյ օրհնու-
 թիւնը՝ ան օրվան վրայ նէ՛ բնաւ չէր ուզեր
 սենեակէն դուրս ելլալ: Սովորաբար զու-
 արթերես իր ծնողացը դէմք կեղար, ու
 շատ անգամ ալ՝ երբոր սենեակէն ներս
 կրմտնար, մէկ պղտիկ երգ մը կերգէր:

Բարի լոյս մայր իմ ու փառք Մատուծոյ
 Որ զիս որջ առողջ հասուց աս առտու
 Ո՛հ քի՛նչպէս ես տաք ու հանգիստ էի
 Եւ քի՛նչպէս անուշ հանդարտ ննջեցի:

Եւ անգին ու նոր օրհնութիւնները
 Որ ամէն բոպէ կուտայ մեր Տէրը
 Ես պիտի սիրեմ ու օրհնեմ զինքը
 Ինծի պարգևած ամէն օրերը

Իր գթութիւնէն ես պիտի խնդրեմ
 Օխ բուն իր որդին ընել աղաչեմ
 Իր պատուէրները որ պարտական եմ
 Զաճուք բռնել պատրաստ կեցեր եմ:

Երբոր վերջի տունը կերգէր, շատ ան-
 գամ արտասուք կրբղխէր սրտէն, ու աս՝
 չէ թէ երբեմն կըպատահէր միայն, հապա
 սովորաբար շաա անգամ կըլլար իրեն:

Փետրվարի մէջ՝ մէկ ցուրտ առտու մը՝
 երբոր տղաքը պատրաստըվեր էին դպրա-

տուն երթալու , Մարիամ մէկ դժկամակու թիւն մը ցուցուց երթալու , ու մէկ ցած ձայնով մը ըսաւ , Մայր , աս առտուն անանկ ցուրտ էր , որ վերը աղօթք չըրի կենամ , ու աղօթք ընենք քեզի հետ . մայրը հրաման ըրաւ իրեն , որ կենայ , ան ատենը ծունր դրաւ Մարիամ , ու անանկ ջերմեռանդ սրսով աղօթք ըրաւ Աստուծոյ . իր աղօթքը էր քանի մը երևելի նիւթերու վրայ , ու անանկ ջերմեռանդութեամբ էր , որ մայրը շատ ուրախացաւ , ու հասկըցաւ որ իր աղջիկը Աստուծոյ հոգիովը սորված է :

1829 . ին՝ 'Չմեռլան մէջ' շատ անգամ կրակի ձայն կելլար քաղաքին մէջը . ու երբոր ուրիշ տղաքները աղմուկ կը հանէին , ու կը վախնային թէ իրենց տունը պիտի երի , Մարիամ շատ կը վշտանար անոնց համար . անգամ մը գիշեր ժամանակ կրակ եղաւ . և հետեւեալ առտուն երբոր ինքը պատուհանէն դուրս կընայէր , ու ան երած տանը տեղը որ տեսաւ , որ ցած ու պզտիկ տունէն էր , ըսաւ . Մայր , երբոր երէկ գիշեր կրակ կը կանչէին , խորհեցայ , թէ այնչափ մեղաւոր մարդիկներ կան , որոնք որ դեռ Աստուած չէին սիրած . ու վախցայ՝ թէ անոնց տուները կը բռնկի , ու իրենք ալ մէջը կերին , դեռ երկինքին ճամբան չի սորված . որ անատենը՝ ընաւ չի պիտի կրնան երթալ անոնք՝ ան երջանիկ աշ-

ի արհր՝ աս խորհուրդը՝ այնչափ վշտա-
ցուց իս, որ լայէն չի կրցի դադարելու,
ուստի, սկսեցի աղօթք ընել անոնց համար:

Արդէն գիտցրված է որ, Մարիամ շատ
կրցանկար՝ որ իր եղբայրները, ու քուրե-
րը ամէն բան ուղիղ ընէին, ինքը կուղէր
որ անոնք ներողամիտ ու հեղ ըլլային, ին-
տոր որ օրհնեալ Փրկիչը էր. ու աս մասին
անանկ զգուշութիւն կընէր, որպէս զի իր
վարքը բարի օրինակ մը ըլլայ անոնց: ()ը
մը իր պզտիկ եղբայրը իրեն զարկաւ. ու
մայրն ալ պատժեց անիկա, իր ըրած յան-
ցանքին համար. երբոր Մարիամ տեսաւ
իր եղբօրը պատժուիլը՝ վշտացաւ. ու անոր
ձեռքէն բռնեց, ու սենեակէն դուրս հա-
նեց. քիչ մը անցնելէն ետեւ նորէն մօրը
քովը եկաւ, ու ըսաւ. Մայր, ես չեմ
կարծեր թէ անգամ մըն ալ եղբայրս պիտի
զարնէ ինծի. իր զրուցուածքէն, ու շարժ-
մունքէն մայրը հասկըցաւ որ՝ դուստրը ա-
ղօթք ըրած է եղբօրը հետ: Քանի մը օր
անցնելէն ետեւ՝ անգամ մըն ալ զարկաւ
եղբայրը իրեն. ու երբոր մայրը պիտի
պատժէր անիկա, մօրը ըսաւ. Սիրելի
մայր, մի՛ պատժեր եղբայրս, կըլուսամ
թէ կրնամ սորվեցունէր անոր, որ անգամ
մըն ալ ասանկ բան մը չընէ. մայրը ներեց
անոր յանցանքը, ու Մարիամ ալ եղբայ-
րը առաւ դուրս տարաւ, ինտոր որ առաջ-
անոնք դուրս ելլալէն ետեւ մայրը կամաց



մը դռանը քովը գնաց , ու դռանը միջոցէն նայեցաւ , ու տեսաւ որ եղբօրը հետ ծուներ դրին , ու աղօթք բռին . ու լսեց որ Մարիամ կըսէր , ՄՎ Տէր , ներէ իմ պղտիկ եղբօրս , ու տո՛ւր անոր մէկ նոր հոգի մը , որ անգամ մըն ալ չի զարնէ ինձի . ու թէ որ զարնելու կամ հրելու ալ ըլլայ նէ՛՛ ո՛վ Տէր , շնորհք տուր ինձի , որ ես ալ չի զարնեմ անոր , հապա ըսեմ , ասանկ բան մի՛ ըներ պղտիկ եղբայրս :

Անգամ մը աղջիկ մը տեսաւ , որ իր բարկութեանը վրայ կըխօսէր , ու կըսէր թէ բարկացած է ինքը . Մարիամ ըսաւ անոր , Մի՛ ըսեր թէ բարկացած եմ հապա ըսէ թէ՛ իմ զգացումներս վնասեր է . ես ըսեմ քեզի , ինչ պէտք է ընել բարկացած ատենդ . բնաւ մի՛ խօսիր , հապա շիտակ դուրս ելիր սենեակէն , ու գնայ առանձին աղօթք բռէ Աստուծոյ . ես ասանկ կընեմ միշտ :

Կիրակի օր՝ մէկ զուարթ օր մըն էր Մարիամին . շատ կըբաղձար շարունակ եկեղեցին երթալ . բայց իր տկարութիւնը շատ անգամ կարգիլեր զինքը . թէ որ մայրը տուներ կենալու ըլլար , ինքն ալ շատ ուրախութեամբ կըմնար , ու կուզէր որ ողջոյն օրը կարգալով , երգելով , ու աղօթք բնելով անցունէր , ընտանիքը դուրս հրածին պէս , իսկոյն կըսէր մօրը . Մայր , աւաճաշունչէն կըկարգաս , ու աղօթք

կրնես . երբեմն կրպատահէր որ , մայրը իր
պղտիկ տղին հետ դործով եղած կըլար ,
ու չէր կրնար իսկոյն անոր ըսածը ըներ ,
ինքը քաղցրութեամբ մը կըթախանձէր մօ-
րը , ու կըսէր , Ես կըգոցեմ դուռը , ու
կրնամ Մատուածաշունչը բերէր . ուստի
պէտքը չէ որ սպասես մայր :

Իր ընթացքէն անանկ կերեալ որ , շատ
կըսարդէր կիրակի օրը , իբրև Տէրօջը օրը ,
ու կուզէր որ բոլոր ժամանակը՝ ան ծառայ-
ութեանը մէջ անցունէր , կիրակի օր մը՝
երբոր մայրը պատու հանին առջին նստեր ,
ու ժողովրդոցը եկեղեցի երթալուն կընայ-
էր , ինքը մօրը քովը գնաց , ու ըսաւ անոր .
Միրելի մայրս , պատու հանին առջին մի՛-
նստիր , ինչու որ չերեար թէ կիրակի օրը
սուրբ կրպահեսկոր :

Մարիամ իր տկարութեանը պատճա-
ռաւ քիչ ժամանակ կիրակի օրվան դպրա-
տուն գնաց . սակայն թէ որ առողջութիւնը
ներելու ըլլար , յայտնի էր որ շարունակ
պիտի երթար հոն , մէկ հաստատուն ու-
փութաջան աշակերտի մը պէս . իր կեանքին
վերջի ամառը՝ երբոր քանի մը շաբաթ ու-
րիշ քաղաք մը գացին , հոն շատ անգամ
գնաց կիրակի օրվան դպրատուն , ու միշտ
կրպիշեր անիկա ուրախութեամբ :

Մայրը շատ կաշխատէր , որ իր զաւկը-
ներուն սորվեցունէ թէ , Մատուծոյ շնոր-
հակալ ըլլալէն ետև՝ իրենց հօրերնու՝

9797
 1646
 պարտին շնորհակալ ըլլալ, իրենց շատ
 կերպ բարիքներ վայելելնուն համար. ա-
 նոնց կրսէր, թէ երբոր հայրերնին հոգ-
 նած ու լքեալ տեսնան, պէտք է որ խոր-
 հին թէ իրենց վրայ ունեցած սէրն է որ
 աս հոգածութիւններուն ու նեղութիւն-
 ներուն մէջը կրճգէ զինքը. նաև կրսէր որ
 ան շատ կրբաղձայ դպրատուն խրկել զի-
 րենք, ու տալ իրենց բոլոր ան բաները,
 որոնք որ կրնային երջանիկ ընել զիրենք.
 նաև կրխրատէր անոնք, որ հնազանդ ըլլան
 հօրերնուն, ու շնորհակալութիւն ցուցու-
 նեն անոր բոլոր ըրած երախտեացը համար:
 Եւծ ուրախութիւն էր իր սրտին, երբոր
 կրտեսնար թէ ուրիշ զաւկրները կարօտ
 էին կրթութեան, որովհետև մի և նոյն
 բանը քանի մը անգամ ըսելով հաղիւ թէ
 կրսորդէին. սակայն Մարիամ շատ տար-
 բեր էր անոնցմէ. ինչու որ կրթութիւնը
 մէկ գամի մը պէս իբրև ապահով տեղ մը
 հաստատուած էր իր վրայ, ու նաև անանկ
 բաւականասէր բնաւորութիւն մը ունէր,
 որ երբոր նոր մուծակ մը կամ նոր հան-
 դերձ մը ունենար, ուրախութեամբ մը կը-
 պահէր ու կրսէր, թէ ես աղէկ հոգ պիտի
 տանիմ ասոնց վրայ, որ ժամանակ մը հայ-
 րըս ծախք չընէ ինծի համար:

Մարիամ երբոր կրտեսնար թէ հայրը
 մտատանջութիւն մը ունէր, կամ մայրը
 բսեր՝ թէ հայրդ հոգնած է, շատ անգամ

կառանձնանար ու աղօթք կրնէր անոր համար . ու գաղանի կըլալէր ըսածը՝ որ կըսէր . Մ՛՛՛՛՛՛՛ Տէր , օրհնէ իմ սիրելի հայրս , ու մխիթարէ անիկա . և խորհել տուր անոր իր երկնաւոր տանը վըայ , ու յիշել տուր իրեն , որ երբ երկինքը երթայ , ալ մէյմըն ալ չի պիտի կրնայ հոգ տանիլ իր մեծ ընտանեացը համար :

Մարիամ միօրինակ հնազանդ էր՝ իր մօրը տըւած մաքրութեան ու բոլոր կարգադրութեան հրահանգութիւններուն հետեւելու , որ շատ զգուշութեամբ իր հանդերձները կրծալէր , ու երբոր դիրք մը կամ խաղալիկ մը առնէր , անոնք գործածելէն ետեւ՝ իսկոյն տեղը կըդնէր անոնք . ու իր հիւանդութեանը մէջ՝ շատ նեղութիւն էր իրեն , երբոր բան մը տեսնար աղտոտ , կամ իր տեղը չի դրած :

Մայրը աղէկ հասկըցաւ որ Մարիամ թէև որչափ պզտիկ ալ էր նէ՝ մէկ դիտաւոր ձեռնտու մըն էր իրեն , իր հրամանը ու ամէն կարգադրութիւնները առաջ տանելու իր ընտանեացը մէջ . ու նաև առաւել օգտակար էր ան , ու յատկապէս ջանք կընէր հոգևոր բաներու մէջ , որ անոնց աղտոտութիւնը՝ իր մօտը եղողներուն մըտացը մէջը հաստատուի :

Պարունին սկիզբը՝ 1830 ին , Մարիամ կրկին մէկ երկան ու վշտացուցիչ հիււանդութիւն մըն ալ ստացաւ , որն որ ողնայարին ոսկորին վրայ էր : Աիրակի առտու մը որ իբր իր նեղութեան ժամանակն էր , երբոր քունէն արթընցաւ , ու ինտոր որ սովորաբար կընէր՝ իր քուրերուն յիշել տըւաւ որ՝ օրը կիրակի է , ու հոգեշահ խօսքեր ըրաւ անոնց հետ , ու աղօթք ըրաւ հետերնին . աղաքը երբոր մօրերնուն սենեակը դացին , ան հասկըցաւ որ մէկ բան մը պատահած պիտի ըլլայ իրենց . ու երբոր տեսաւ որ Մարիամ ալ կուլար , հարցուց իրեն՝ թէ ինչ կայ արդեօք . Մարիամ պատասխանեց՝ թէ ես չեմ կրնար ըսեր մայրս , Սառան թող ըսէ քեզի . ես իրեն ըսած եմ . իր քոյրերուն սիրտը էվելօք բորբոքված ըլլալուն համար՝ մայրը կրկին հարցուց իրեն . ու ըսաւ՝ թէ Մարիամ սիրելիս , ըսէ ինծի թէ ինչ է պատճառը . անատենը Մարիամ պատասխանեց , թէ ո՛հ մայր , ես ալ ապրիլ չեմ ուզեր աս չար աշխարհիս մէջ . ես կուզեմ երկինքը երթալ , ու հոն ըլլալ , ուր տեղ որ Մատուած է , երբոր վեր կընայիմ՝ դէպի երկինքը , ու կըխորհիմ որ Մատուած

հոն է , սուրբ հրեշտակները հոն են , ու օրհնեալ Փրկիչը հոն է , ես չեմ կրնար ապրիլ աս աշխարհիս մէջ , ու մէկ մեղաւոր մը ըլլար . մայրը ըսաւ . սիրելի Մարիամն , Աստուած ըրաւ աս աշխարհքը մէկ գեղեցիկ դիրքով մը , ու ամէն բան գեղեցիկ ու հաճելի մեղի . ես գիտեմ անիկա ըսաւ Մարիամ , բայց ես կուզեմ ըլլալ հոն , ուր տեղ որ Աստուած է :

Իր հիւանդութիւնը թէպէտ օր ըստ օրէ շատցաւ , սակայն որչափ որ կրնար դիմանար նէ՛ կուղէր որ զինքը վար տանէին , որ կարող ըլլար ներկայ գտնուիլ ընտանեաց աղօթքին ժամանակը . ու նաև կուղէր որ ծունր դներ աղօթք ըսված ժամանակը . մինչև անգամ ուրիշները կըխորհէին՝ թէ կարողութիւն չունի ընելու անիկա :

Աստու մը՝ երբոր կարող չէր ինքնին ելլալ նստելու , մայրը քովը կանչեց , ու ըսաւ անոր . ես հիմայ անանկ կըզգամ , որ իբր թէ Աստուած նոք սիրտ մը տըլաւ ինձի . մայրը հարցուց թէ ինչ բան է , որ ասանկ խորհել կուտայ քեզի , ինքը ըսաւ՝ թէ որովհետև Աստուծմէ՛ ՚ի դատ մէկը չի կրնար մեր մտքին մէջէն մեղանշական խորհուրդները հանէր , ու բարի խորհուրդներ դներ մեր մտացը մէջ . մայրը նորէն ըսաւ , թէ ինչպէս կըզգաս , որ կըխորհիս՝ թէ մէկ նոր սիրտ մը ունեցած ես . Մարիամ ըսաւ . շատ ուրախութիւն

կըզգամ , կըսիրեմ աղօթք ընել . ու երբոր աղօթքի կըսկըսիմ , կուզեմ որ բոլոր ժամանակը աղօթք ընեմ . Տիմայ շատ դիւրին է ինծի աղօթք ընել . ես Տիմայ շատ երջանիկ եմ :

Մարիամ կուզէր որ ամէն օր մայրը Աստուածաշունչէն գլուխ մը կարգայ իրեն , ու աղօթք ընէ հետը . աս գործը՝ իր ամէնէն բերկրալի բանն էր , ու ինչչեցէ պատճառ որ պատահէր , բնաւ չէր ուզեր արգել լիլ աս հոգևոր պաշտօնէն : Աստուած մը երբոր խնդրեց մօրմէն որ կարգայ իրեն , ու մայրն ալ ան միջոցին գործով ըզբաղեալ էր , ինքը ըսաւ մօրը . մայր , երբոր իմ երկնաւոր տունս երթամ , հոն աղօթքի համար սպասելիք չունիմ , չէ , անուշիկ Մարիամն ըսաւ մայրը . ու աս ըսելով , սկըսեց աս երգը երգել :

Ո՛չ դատարկ խօսքեր պիտի խօսինք մենք
 Ո՛չ ալ սնտոեաց ականջնիս գնենք
 Անհուն շնորհքը ըլլայ մեր երգը
 Եւ Աստուած պիտի հաճի լսելը :

Այո մայր ըսաւ Մարիամ . ես կըրիտիաքիմ հոն ըլլալ . որ անատենը կրնանք օրհնել Աստուած , բոլոր ժամանակը . ու օրհնեալ Փրկիչն ալ պիտի հաճի մեր երգը լսելու . ահա աս խորհուրդն է , որ երջանկութիւն կըզգացունէ ինծի :

Երբոր շատ նեղութեան մէջ էր , երբեմն
կրէր թէ , ես կուզեմ համբերող ըլլալ ,
ու սիրով տանիլ իմ տառապանքներուս .
օրհնեալ Փրկիչը ինձմէ էլելի նեղութիւն
քաշեց , ուրիշ անգամ մըն ալ ըսաւ . ո՛հ
մայր , ինձի համար ունեցած հոգի Աստու-
ծոյ յանձնէ . ինչու որ ան է որ պիտի մեղ-
մացունէ իմ ցաւս . ու թէ որ չի մեղմացու-
նէ ալ նէ , ես պիտի ջանամ յօժարու-
թեամբ տանիլ անոր :

Իրիկուն մը երբոր շատ հիւանդ էր ,
ու մէկ նեղութեան վիճակի մը մէջ՝ երկար
ժամանակ պառկած էր , ու մայրն ալ կե-
ցած զինքը կը դիտէր , Վարիամ իսկոյն
ելաւ՝ ըսելով :

Օրհնեցէք անիկա , սիրելի մայր , օրհ-
նեցէք անիկա . անատենը մայրը աս երգը
երգեց :

Օրհնեցէք զԱստուած ամէն արարածք
Օ, Տու իչն ամէն օրհնութեանց՝ բարեաց
Օրհնեցէք ո՛վ դուք զօրքըդ երկնային
զմայր և զՍրբի և զՍուրբ Հոգին :

Մհ , շատ անուշ է ըսաւ Վարիամ , կըր-
կին երգէ անիկա սիրելի մայրս :

Աիրակի օր մը՝ երբոր իր քոյրերը եկե-
ղեցիէն դարձեր էին , Վարիամ ըսաւ ա-
նոնց . մի՛ կարծէք թէ եկեղեցի , ու կիրակի
աւուր դպրատուն երթալը՝ ու նաև ուրիշ

բան մը չընելը՝ կիրակի օրը սուրբ պահել է . ձեզի պէտք է որ լսածնուդ վրայօք խօսիք , սուրբ դիրք կարդաք , ու աղօթք ընէք . ու ան է օրը սուրբ պահելը . կուզեմ որ իմ Մատուածաշունչս առնէք , ու առանձին մէկալ սննեակը երթաք , ու գլուխ մը կարդաք , ու ծունր դնէք Մատուծոյ առջին ու աղօթք ընէք իրեն . կուզեմ դիանալ ձեր ասանկ ընելը . ու թէ որ ընելու ըլլաք նէ , Մատուած պիտի լէ ձեր աղօթքին . կարելի է որ պիտի ըսէք , թէ ինչ գիտես որ Մատուած պիտի լէ մեր աղօթքին . ես գիտեմ որ պիտի լէ ան , ու ըստհետեւ ինքը նոր սիրտ մը տրուա ինձի . ասոր համար գիտեմ որ , թէ որ իրեն աղօթելու ըլլաք , ան պիտի լէ ձեզի : Իր խօսակցութիւնը անանկ ջերմեռանդ ու ազդու եղաւ , որ քոյրերը լացին , ու իրեն Մատուածաշունչը առին , ու իր ըսածին պէս ըրին :

Աւրիշ կիրակի օր մը կէս օրէն ետեւ ըսաւ մայր , գրէթէ կիրակին անցաւ . ու մենք դեռ † ժողով մը չունեցանք . կրնանք մի ժողով մը ունենար հիմայ : անատենը մայրը կարդաց Յօհաննու տասնըչորսերորդ գլուխը , որ անոր կարդացվելը շատ կրօն-

† Ժողով Բառք սս գրքին Տը սովորաբար՝
աղօթի ժողովելու կրնանալէ :

քէր Մ'արիամ լսելու . երբոր երկրորդ ու
 երրորդ տուները կըկարդացվէր , որ կը-
 սէր , թէ՛ “Իմ հօրս տունը շատ բնակա-
 րաններ կան . հասպա թէ չէ ես ձեզի կը-
 սէի , որ կերթամ ու ձեզի տեղ պատրաս-
 տեմ . և թէ որ երթամ՝ ու ձեզի տեղ
 պատրաստեմ , նորէն կուգամ , և ձեզ
 քովս կառնեմ . որ ես ո՛ւր եմ նէ , դուք
 ալ հոն ըլլաք” : Աս միջոցին Մ'արիամ
 ըսաւ . ես գիտեմ ինչ ըսել է ան . օրհ-
 նեալ Փրկիչը երկինքը բնակարաններ
 պատրաստեր է , բոլոր զինքը սիրողներուն
 համար . անանկ տեղ մըն է ան , ուր տեղ
 օր իրեն հետ կրնանք ըլլար երկինքին մէջ :
 Աւ երբոր կըսէ՛ թէ Փրկիչը պիտի գայ , ը-
 սել չէ թէ դատաստանի օրվան գալն է ան ,
 հասպա երբոր մեռնինք , Փրկիչը պիտի գայ
 մեզի համար , որ մենք ալ իր եղած տեղը
 ըլլանք . ո՛հ , ինտոր երջանիկ կրնէ իս աս
 խորհուրդը՝ երբոր կըխորհիմ , թէ մենք
 պիտի ըլլանք հոն , ուր տեղ որ ինքը է ,
 ու կօւզեմ որ խեղճ մեղաւորները գիտնան-
 թէ , թէ որ զղջան , ու աղօթք ընեն , ա-
 նոնք ալ կրնան ըլլար հոն , ուր տեղ որ
 Փրկիչը է : Ինքը այնչափ տկար էր , որ
 կարող չեղաւ ելլալ նստելու , հասպա պառ-
 կած տեղը ձեռքերը ժողվեց , ու աղօթք
 ըջաւ իրեն , իր ընտանեացը , ու ան կողմին
 քարոզիչին համար : Այաւ ընկերներուն
 համար աղօթեց , որ Աստուած շնորհք մը

հաստատէ անոնց սրտին մէջ , որ անոնք կիրակի օրը սուրբ պահեն . ու դարձեալ ըսաւ . ո՛հ , բոլոր ծնողքները սորվեցունէին իրենց զաւակներուն կիրակի օրը սուրբ պահելը :

Մարիամ շատ սէր ունէր զինքը խրատող քարոզիչին վրայ , որուն որ հովուական կառավարութեանը տակն էր իրենց ընտանիքը . նաև նոյն քարոզիչն ալ մարգասիրաբար կրինամէր զինքը , ու շատ անգամ տեսութեան կերթար իրեն . ու թէ որ իր գալուն միջոցը քիչ մը երկրննալու ըլլար , իսկոյն կուզէր որ մարդ խրկուի ետևէն , ինչու որ շատ կըսիրէր լսելու անոր հոգեշահ խրատները , ու աղօթքը : Մարիամ շատ անգամ կըսէր՝ թէ շատ կըսիրեմ իմ հոգևոր խրատիչս , ու շատ ալ ուրախ կըլլամ երբոր տեսութեան կուգայ ինձի . գիտեմ որ ինքը շատ մարդասէր է , որ այնչափ հեռու տեղէն կուգայ ինձի պէս պղտիկ աղ ջիկ մը տեսնալու . երբեմն կըպատահէր որ ինքը շատ տկար կըլլար , ու չէր կրնար խօսելու անոր հետ . ան աւտենն ալ մփօրինակ անոր երեսը նայելով , իր սրտին հաճութեամբը մտիկ կրնէր իր ըսածներուն , ինչ աղէկ պիտի ըլլար իրենց վախճանը , թէ որ ամէն տղայ ասանկ յարգէին հոգևոր պաշտօնը :

Օր մը Մարիամին եղբայրը իրեն համար խաղալիկներ ծախու առաւ , կարծելով թէ իրեն հաճելի պիտի ըլլան անոնք . ուստի տարաւ անոնք իր առջին շարեց , Մարիամ թէպէտ շնորհակալ եղաւ իր եղբօրը , սակայն մայրը հասկըցաւ որ , եղբօրը յուսացածին չափ հաճելի չեղաւ իրեն անոնք . եղբայրը սենեակէն դուրս ելլալէն ետեւ , Մարիամ ըսաւ մօրը . մայր , ես չեմ ուզեր եղբօրս ըսել , ինչու որ ան կըխորհի թէ անոնք հաճելի պիտի ըլլային ինծի . սակայն ասանկ բաները առջի պէս հաճելի չեն ըլլար հիմայ ինծի . անոնք երջանիկ չեն կրնար ըներ իս . ես առաւել նախապատիւ կրնտրեմ պահել ստակը , աւ անով բարեբարու թիւն ընել ուրիշներուն :

Մարիամին ընկերները ու բարեկամները շատ ընծաներ կըխրկէին իրեն , ու ինքը շատ անգամ աղօթք կրնէր անոնց համար , որոնք որ կրցիչէին զինքը . առտու մը մէկէ մը ընծայ մը եկաւ իրեն . ինքը ինտոր որ շատ անգամ կրնէր , իսկոյն հարցուց թէ , ան խրկողը բարեպաշտ է մի արդեօք . մայրը ըսաւ թէ , չեմ կարծեր որ բարեպաշտ ըլլայ . Մարիամ նորէն ըսաւ թէ , թէ որ

չես կրնար խոստանար ինծի անոր բարե-
պաշտութիւնը , ուրեմն սիրելի մայրս ինծի
պէտք է որ աղօթք ընեմ անոր համար .
կրկամիս իս վեր առնէր , ու դուռը գոցեր .
անաւենը աղօթք ըրաւ անոր համար , որ
Մատուած օրհնէ անիկա , ու շնորհք մը
հաստատէ անոր սրտին մէջ , որ ան իր Տէր
Մատուածը սիրէ , ու զղջայ իր մեղքերուն
համար . որ կարող ըլլայ երկինքը երթա-
լու . նոյն անձին համար ուրիշ շատ անգամ
ալ աղօթեց , ու անգամ մըն ալ ըսաւ , ես
կուզէի իրեն հետ խօսիլ , ու իր հետը
աղօթք ընել . ես չեմ կարծեր թէ պիտի
վախնամ կամ ամբչնամ հիմայ , ինտոր որ
աս երգը կըսէ :

Յիսուսը միայն յոյս ինձ բռներ եմ
Մնկէց ամբչնամ և ըլլամ վախկոտ
Չէ . հապա երբոր զինքը չի պատուեմ
Մնիկա՛ ըլլայ ինծի մեծ ամօթ :

Մարիամ շատ փափաք ունէր ուրիշնե-
րուն հոգիներուն փրկութեանը համար ,
ուստի ընտանեաց մէջ եղող ամէն մէկուն
կաղաչէր որ , տէրը փնտրուն . ու աս օգ-
տակար գործէն բնաւ ետ չի կեցաւ , այլ
մանաւանդ առաջ գնաց անոր մէջ , երբոր
սկըսեց քիչ մը ընդնտնալ իր հիւանդու-
թիւնէն :

Կեսարոս անուն սև մարդ մը կար , որն

որ ծեր ու աղքատ մարդ մըն էր , ու սպասաւորութեան պատճառաւ երբեմն իրենց տունը կուգար . Մարիամ քանի որ պատուհանէն կրտսնար աս խեղճ մարդը , իրեն փափաք մը կուգար անոր հետ երկինքին վրայօք խօսելու . ինչու որ իրեն անանկ կըթուէր թէ , կարելի է որ մեռնելու համար պատրաստուիած չէ ան . օր մը որ կառքով պըտըտելու գացեր էին , ճամբան տեսաւ անիկա , ու նոյն գիշերը մօրը ըսաւ . մայր , Աեսարոսին ետեւէն մարդ կըխրկեն , որ հոս գայ . ինչու որ Մստուած քանի մը բան դրաւ մտքիս մէջ , անոնք պիտի խօսիմ իրեն . մայրը առաջին անգամին կարծեց , թէ երազ տեսաւ , ու իրեն հարցուց թէ ինչո՞ւ հիմայ Աեսարոսին վրայ կըխորհիսկոր . Մարիամ ըսաւ , կառքով գացած ժամանակս , ճամբան տեսայ անիկա : Աւրիշ անգամ մըն ալ երբոր տեսաւ անիկա , ըսաւ մօրը . մայր , ահա Աեսարոսը հոս է , ներս կանչէ անիկա , պիտի խօսիմ անոր հետ . մայրը ներս կանչեց անիկա , ու չիցտէր թէ իր զաւակը ինչ պիտի խօսի անոր հետ . երբոր Աեսարոս սենեակէն ներս մտաւ , Մարիամ հեղութեամբ մը ըսաւ իրեն , Մստուած կըսիրենս մի . իրեն աղօթք կընենս մի . ծեր մարդը ապուշ մնաց , ու չի գիտցաւ թէ ինչ պատասխան տայ . Մարիամ շարունակեց իր խօսքը ըսելով , թէ որ ասանկ չես ըներ , պէտք է որ շատ

ազօթք ընես , որ Մատուած գիտցունէ քեզի , թէ արդեօք դուն քրիստոնեայ ես , թէ չէ : Աորէն հարցուց , Մատուածաշունչ կրկարդամ մի . կրկարդամ ըսաւ Աեսարոս . Մարիամ հարցուց , քեզի համար Մատուածաշունչ մը ունի՞մ մի . այո՛ , ունիմ ըսաւ Աեսարոս . Մարիամ ըսաւ , թէ որ չունիս նէ , ես իմս կուտամ քեզի . դուն գիտես որ մէնք ամէնքս ալ պիտի հիւընդենաք , ու մեռնինք , ու գերեզմանը պիտի դրվինք . բայց Մատուած նորէն պիտի յարուցանէ աս մարմինները . ծերունին լսելով աս խօսքերը , մէկ հառաչանքով մը ըսաւ . ով զարմանալի . ու իր թառամեալ երեսէն արձունքները թափեցան :

Մարիամ շարունակեց ըսելով . դուն պիտի հիւընդենաս , ու շատ չարչարանք քաշես , ու չի պիտի գիտնաս , թէ ինչու այսչափ կը չարչարվիս հոս . բայց երկնաւոր աշխարհքին մէջ Մատուած պիտի գիտցունէ քեզի . կըսես ինձի , թէ պիտի սիրես Մատուած , ու պիտի աշխատիս ծառայել անոր . այո՛ , ըսաւ Աեսարոս . պիտի ջանամ ծառայել անոր . Մարիամ ուղեց որ քիչ մըն ալ կենայ Աեսարոս , որ մէյմըն ալ խօսի հետը , ուստի նորէն ըսաւ , Մատուած մէկ փառաւոր ու երջանիկ աշխարհք մը ըրաւ , ու հոն բնակարաններ պատրաստեց . ու ի՞նչ որ զինքը կը սիրէ հոս աս կենսքիս մէջ , հոն պիտի ընդունի անոնք , երբոր

մեռնելու ըլլան . ո՛հ , Մատուած հոն է , ու
օրհնեալ Փրկիչը հոն է . ու նաև մէկ պղտիկ
քոյր մը ունիմ ես հոն , ես կուզեմ որ դուն
մէկ բարեպաշտ քրիստոնեայ մը ըլլաս , որ
երբոր մեռնելու ըլլաս , Մատուած ընդունի
քեզ ան փառաւորեալ կեանքին մէջ , ու
հոն զինքը փառաբանես ինձի հետ : Եւրդճ
ձերունին նորէն սկսեց արտասուք թափել ,
ու ետ դարձաւ ըսելով , մնաս բարով
Մարիամ , դուն կուզես որ քիչ մալ կե-
նամ հոս , սակայն ուրիշ ժամանակ ալ
կրնանք խօսիլ : Օտերունին դուրս ելլալէն
ետև , Մարիամ աղօթք ըրաւ անոր
համար :

Հետեեալ առտուն Մարիամ ըսաւ իր
մօրը , ես բոլորովին չի լմնցուցի , ինչ որ
Մատուած ուզեց որ զուրցեմ խեղճ կեսա-
րոսին . ես կուզեմ որ նորէն մարդ խրկես
հտեէն որ գայ , ու աղօթք ընեմ իրեն
հետ . վասն զի , թէ որ իմ աղօթք ընելս
լսէ ան , դուցէ աղօթքի մը շնորհք պիտի
հաստատէ Մատուած անոր սրտին մէջ :

Մարիամ այնչափ փափաք ցուցուց կե-
սարոսին հետ խօսելու , որ մայրը մարդ
խրկեց որ նորէն բերել տայ անիկա . սա-
կայն յատուկ ժամանակ մը չորոշեց՝ ան ա-
տենը գալու համար , մէյմըն ալ լսեցին որ
խեղճ ձերունին մեռեր է . որ Մարիամին
հետ խօսելէն քանի մը օր ետև՝ մէկ թեթև
հիւանդութենէ մը մեռած էր :

Վանի մը օրէն ետև մայրը տեղ գնաց մէկ հարկաւոր գործի մը համար . ու երբոր տուն դարձաւ՝ իսկոյն սպասաւորին հարցուց , թէ Վարիամ ինտոր էր . սպասաւորը ըսաւ թէ շատ աղէկ էր . ինքը լսեր էր որ , իր հոն չեղած ժամանակը՝ տանը առջին երգէոն կերգէին . ուստի սպասաւորին նորէն հարցուց թէ , արդեօք Վարիամ հաճեցա՞ւ մի . սպասաւորը պատասխանեց թէ , կերևար թէ շատ հոգը չեղաւ անոր վրայօք . երբոր Վարիամ մօրը հետ մինակ էր , անոր ըսաւ թէ , մայր , որչափ վշտացայ երբոր տեսայ թէ , մէկ խեղճ մարդ մը երգէոնով կերգէր , ու շատ մարդիկ ու տղաքներ ալ բոլորտիքը կայնած էին , ու ան պզտիկ սև տղաքները կերևային , թէ շատ խեղճ ու աղտոտ էին . Վարիամին սիրտը այնչափ եռանդոտ էր , ու այնչափ ալ ուրիշներուն աղէկութիւնը կուզէր , որ իր տղայութեամբը՝ աս կերպովը խորհեցաւ , ու ըսաւ թէ՛ ես կըլախնամ որ անոնց վրայ մէկը չի գայ , որ հոգ տանի իրենց համար , ու խօսի իրենց՝ Աստուծոյ վրայօք , ու աղէկ ըլլալու վրայօք . ես անոնց համար աղօթք պիտի ընէի , սակայն մէկը եկաւ , ու չի կրցի աղօթք ընելու . հիմայ կրնաս աղօթք ընել անոնց համար աղջիկս , ըսաւ մայրը . անատենը ծուներ դրաւ Վարիամ , ու ջերմեռանդ սրտով աղօթք ըրաւ ան մարդուն , ու անոր քովը կեցող մարդոց ,

ու ան խեղճ տղոցը համար , որ անանկ ե-
բեաց՝ թէ իր սիրտը լեցուած էր կարեկ-
ցութեամբ :

Մէկ միջոցով մը Մարիամ քիչ մը ը-
ւարնացաւ իր հիւանդութենէն , ու կարող
եղաւ տանը վարի դատիկոնը երթալու . իր
ընկերներէն քանի մը տղաք եկան իրեն
տեսութեան . ու վերջը տղաքը սկսեցին խա-
ղալ , Մարիամ որ կարողութիւն չունէր
անոնց հետ խաղալու , սակայն անոնց խա-
ղալը տեսնալովը դուարձացաւ . ան միջոցին
մէկ կամ երկու անգամ սաստիկ խնդաց
մայրը գիտնալով որ դեռ տկար է , վախ-
ցաւ թէ կրվնասէ իրեն այնչափ խնդալը ,
ուստի քաղցրութեամբ մը դուրձացուց զին-
քը , որ շատ չի խնդայ . ընկերները երթա-
լէն ետև՝ Մարիամ մօրը քովը գնաց , ու
իրեն հարցուց , թէ արդեօք մեղք է մի
խնդալը ու խաղալը . մայրը ըսաւ թէ՛ մեղք
չէ , ու շատ ուրախ եմ ըսաւ տեսնալով
քեզ քու բարեկամ ընկերներուդ հետ այդ-
չափ հաճութեամբ ուրախանալդ . ու ան
խնդալուդ վրայօք ալ որ ըսինէ , միայն
քու տկարութեանդ համար էր , որ վախ-
ցայ թէ չըլլայ որ վնասէ քեզի : Մարիա-
մին աչքերը արձունքով լեցուեցաւ , ու
սկսեց արտասուք թափելով ըսել . ո՛հ ,
մայր , կրվախնամ թէ նորէն մեղաւոր կըլ-
լամկոր :

Մարիամին իր ծնողացը ունեցած հնա-

զանդուծիւնը արդէն յիշած ենք. նաև
անիկա շատ ջանք ունէր բոլոր մօրը ըրած
կարգադրութեանցը հաճելու, մանաւանդ
երբոր իր կամքին հակառակ բան մը ըլլար.
անգամ մը իր ծանօթ խաթուններուն մէ-
կուն Սարիամ խօսք տրւեր էր՝ ու օր մը
որոշեր էր, որ նոյն օրը իրեն տեսութեան
երթայ, բայց երբոր ժամանակը եկաւ
արդելք մը եղաւ, ու յարմար չեղաւ որ
երթայ. Սարիամ շատ ուղեց որ երթայ.
երբոր մայրը ըսաւ թէ հիմայ չերթալիր,
ինքը շատ տրտմեցաւ իր յոյսէն զրկուելուն
համար, բայց մէկ զուարթ դէմքով մը
սկսեց արտասուել ու ըսաւ. իմ լալս մեղք
չէ, անանկ չէ սիրելի մայրս, որովհետև
արցունքներս ակամայ կուգան:

Երբոր Սարիամ քիչ մը ընդնացած
էր, իրենց բարեկամներուն մէկուն մէկ
պղտիկ տղան, որն որ շատ կըսիրէր Սար-
իամ, շատ սաստիկ հիւանդ էր. մայրը
շատ անգամ տեսնալու կերթար անիկա,
ու երբոր տուն կըգառնար, Սարիամ
յատկապէս կըհարցունէր անոր վրայօք.
ուստի մայրը իրիկուն մը ըսաւ անոր հա-
մար, թէ կերեայ թէ պիտի մեռնի ան,
ու կարելի է որ աս գիշերը գլուխ չի հա-
նէր, ինչու որ շատ հիւանդ է. աս միջոցին
Սարիամ թէպէտ անկողինին մէջն էր,
սակայն լսեց մօրը ըսածները, ուստի իսկոյն
ուղեց որ անկողինէն վար առնեն զինքը,

ինչու որ անատենը շատ տկար էր , և ուրիշին ձեռնառուութեանը կարօտ էր . բայց երբոր գեանին վրայ նստեցուցին , ինքը ծուներ դրաւ ըսելով , կուղեմ աղօթք ընել իմ բարեկամիս , ու անոր մօրը համար , ու ասանկ աղօթեց . Ա՛յլ Աստուած , օրհնէ աս սիրելի մանուկը , որ շատ չի չարչարւի . հապա շուտով երկինքը ան անիկա . օրհնէ Տէր անոր մայրը , որ շատ չի տրամի , ինչու որ դուն պիտի ընդունիս անոր զաւակը երկինքը . օրհնէ Տէր անոր հայրը , որ հիմայ հեռու դացած է . որ շատ չի վշտանայ , հապա յիշէ որ դուն պիտի ընդունիս անիկա շուտով իր երկնաւոր տունը :

Երբոր Մարիամ ըզընտնալու վրայ էր , յոյս ունէր որ երբեմն դուրս պիտի ելլայ , ու իր հասակակից ընկերներուն հետ տեսութիւն ընէ . սակայն քիչ մը ժամանակէն ետեւ հասկըցաւ որ , ամէն հեշտալի բաներուն հետ մեղքը խառնելած է . ուստի շատ անգամ տրամեցաւ իր յոյսէն զբերովելուն համար : Իր հիւանդութեանը մէջ կերեւար թէ իր միտքը փոփոխութիւն մը ունեցաւ , ու միշտ միաբանած էր իր մօրը հետ կարգալու , ու աղօթք ընելու . և նաև անանկ կերեւար թէ պատրաստ կեցած էր մէկ ասկէց աղէկ ուրիշ աշխարհքի մը համար . Սակայն քանի որ ողջ էր , միշտ տրտում էր ուրիշներուն սխալմունքները

տեսնալով . և թէ՛ քիչ մարդիկ կան որ ան
առարկային վրայ կուղեն խօսիլ , որն որ
իրեն մեծ երջանկութիւն կրպատճառէր .
երբեմն կրպատաճէր որ , ուրիշներուն հա-
մար կըխօսէր , թէ՛ անոնք բարեպաշտ մար-
դիկ են . խօսքը լմննալէն ետե՛ ինքը կը-
սէր որ , չեն երևար թէ՛ իրենց մտած-
մունքները երկնաւոր են . իր զգացումնե-
րը թէպէտ պարզ էին , ինտոր որ մէկ պրզ-
տիկ աղջկան մը արժան է , սակայն իր
միտքը անանկ կատարելութիւն մը ունէր ,
որ իբր թէ չափահաս կատարեալ քրիս-
տոնեայ մըն է . որ արդարև աս բանը մէկ
զարմանալի բան մըն էր :

Իր հիւանդութենէն առաջ՝ ինքը սովո-
րութիւն մը ունէր որ առտու ու իրիկուն
իր քուրերուն հետ կերգէր , ու աղօթք
կընէր . և հիմայ ալ՝ որ քիչ մը ըռնացած
էր , երբոր կարողութիւն ունենար՝ կուղէր
որ անոնց սենեակը երթար , ու աղօթք ը-
նէր անոնց հետ . աս ընելէն մէկ կամ եր-
կու օր ետքը մօրը եկաւ՝ ու ըսաւ , թէ ա-
ղէկ կըլլայ որ իմ Աստուածաշունչս , ու
շարականս առնեմ , ու իմ սենեակիս մէջ
մինակ աղօթք ընեմ ես : Անգամ մըն ալ
լալով քրտը ըսաւ թէ , դուն շատ արագ
աղօթք կըսես , ու անանկ կարտաբերես
որ , ես չեմ ուղեր ան կերպով լսել Աս-
տուծոյ անունը , ու ես չեմ կարծեր թէ
Աստուած պիտի լսէ ասանկ աղօթքի մը :

Երբոր տղաքը շարական կրսէին , շատ ան-
գամ ինքը անոնց կրսէր որ , ո՛հ , ասանկ
երևելի խօսքերը արագ մի՛ արտաբերէք :
Որ ժամանակ որ Աստուծոյ վրայօք խօսելու
ըլլար , շատ յարգանօք կրխօսէր , ու եր-
բոր Փրկչին անունը յիշելու ըլլար ընդ-
հանրապէս օրհնեալ Փրկիչ կրսէր :

1830 ին՝ Յուլիս ամսուն մէջ Մարիամ
իր ծնողացը հետ պտրտելու գնաց , որ գա-
ցած տեղերնին քսան մղոնի չափ հեռու էր
քաղաքէն . դառնալու ատեննին անձրև ե-
կաւ . ու նաև ուրիշ քանի մը դիպուածներ
պատահելով , անհանգիստ եղան . Մարի-
ամ շատ հոգնեցաւ նոյն օրը , ու երբոր իր
սենեակին մէջ առանձնացաւ հանգստանա-
լու համար , մայրը ըսաւ . սիրելիս , կարծեմ
թէ աս գիշեր անկողինին մէջը աղօթք պի-
տի ընես . Մարիամ պատասխանեց թէ ,
ես հիմայ պիտի ծուներ դնէի աղօթք ընե-
լու , ու կուզեմ որ դուն ալ կենաս , ու
հետս աղօթք ընես . մայրը թէպէտ շատ
գործ ունէր տեսնալու նոյն միջոցին , սա-
կայն կեցաւ ու աղօթք ըրաւ անոր հետ ,
ու լսելով իր զաւկին աղօթքը , որ շնորհա-
կալ եղաւ Աստուծոյ բարութիւններուն ,
սիրտը հանգիստ եղաւ , ու հրապուրվեցաւ
երախտագէտ ըլլալ Աստուծոյ ողորմու-
թեանը՝ որ ըրած էր իր զաւկին , որն որ
դեռ վեց տարիան չի կար : Ասև ան քա-
չած նեղութեանը համար տժգոհ ըլլալու

տեղը , շնորհակալ եղաւ Մատուծոյ , որ անանկ բարձր լեռներ , ու գեղեցիկ ծաղիկներ ստեղծեր է . և թէ՛ հոյ՛ը շատ սաստիկ չի փչեց , ու չափազանց անձրև չեղաւ :

Մայրը սովորութիւն մը ունէր որ , երբոր տեղ մը երթալու ըլլար , որ մէկ կամ երկու ժամ պիտի ուշանար , զաւակներուն կը պատուիրէր՝ թէ որ իրեն հնազանդ ըլլան , ու ըսածին պէս կենան , դառնալու ատենը բոլոր իր տեսածին ու լսածին վրայօք պատմութիւն կընէ իրենց . աս կերպով ինքը գտաւ որ , իր մտացը առողջարար ազդուութիւն մը կըլլակոր տղոցը պատմելու պատճառաւ , անցած բաները միտքը պահելը , ու անոնց մէջէն օգտակար դաս մը կըհանէր տղոցը , ու նաև կարող կըլլար անոնք զուարճացունելու ու հրահանգելու :

Կանանց հետ մայրական ընկերութիւն մը ունէին , ուր երբեմն կըժող վըվէին իրենց առարկային վրայ խօսելու . երբոր ժողովքէն կըդառնար , կարելի եղած ժամանակը , զաւակներուն պատմութիւն կընէր անոր վրայով . աս ընելուն դիտաւորութիւնը ան էր որ որ իր ընտանիքը վարժէ . Մարիամ աս բանին մէջ շատ աղէկ յառաջացաւ , ինտոր որ յառաջադէմ էր ուրիշ ամէն բաներու մէջ ալ . քոյրերը վերջը հասկըցան որ , երբոր իրենք կըխաղային , Մարիամ իրենց կըսէր թէ , չի

մոռնանք, որ մեր սիրելի մայրը ժողովքի գնաց, ուր որ խաթունները կը ժողվելին աղօթք ընելու իրենց զաւակներուն համար: Մայրը օր մը կէս օրէն ետև՝ երբոր մայրական ժողովքը գացեր էր, Մարիամ նստած տեղը գլուխը բարձին վրայ դրէր, ու կուլար. քրոջը մէկը կարծեց թէ հիւանդ է, ուստի հարցուց իրեն թէ, ինչու կուլաս. Մարիամ պատասխանեց թէ, ժողովքին վրայ կըխորհէիկոր, ուր որ մայրս գացեր է, ու մեզի համար աղօթք կընենկոր հոն. աս ըսելով, իր պզտիկ եղբայրը քովը կանչեց, ու հարցուց թէ, գիտես մայրս ուր գացեր է. ու ըսաւ. ես կուզեմ որ դուն մէկ բարի տղայ մը ըլլաս, որ երբոր մեծնալու ըլլաս նէ՛ քարոզիչ ըլլաս, ու հնդկաստան երթաս, ու Հեթանոսներուն քարոզես. քանի մը ըոպէ խօսեցաւ անոր հետ, ու վերջը քոյրերն ալ կանչեց, ու ուղեց որ ամէնքը մէկ տեղ աղօթք ընեն Աստուծոյ, որ օրհնէ զիրենք:

Մայրը երբոր իր զաւակներուն աղօթք ընել կըսորվեցունէր, որչափ որ կարելի է կըջանար որ անոնց մտացը մէջ, ուղղութեան զգացում մը հաստատէ, ու նաև իրենց աղօթք ըսել կուտար, որ իրենց տղայական հասակնուն համեմատ իրենց փափաքը յայտնելին, ու երբոր անոնց ըսածներնուն մէջ անյարմար բան մը ըլլար, ինքը քաղցրութեամբ կուղղէր անոնք. ինչ

քը կուզէր որ , ինչ որ կըխնդրէին նէ Մստուծմէ ճշմարտութեամբ խնդրեն . ու նաև կուզէր անոնց սորվեցունել , թէ ինչ որ կըխնդրեն իրենց երկնաւոր հօրմէն , նոյն համարձակութեամբը խնդրեն իրմէն , ինտոր որ իրենց ծնողքէն կըխնդրեն . միայն թէ մեծաւ յարգանօք ու ակնարկութեամբ . աս ճամբով շուտով սորվեցան անոնք իրարու հետ առանձին աղօթք ընել առանց դժուարութեան :

Երբոր Մարիամ իբր չորս տարեկան էր , շատ փափաք ունէր դուրսի երկիրները գացող քարոզիչներուն վրայօք լսելու , ու կուզէր որ ուրիշ տղոց հետ միաբանին , ու բան տան ան մարդոցը համար , որոնք որ Մստուծոյ , ու ան երջանիկ կեանքին համար տեղեկութիւն չունին . ինքը սորված էր անոնց համար աղօթք ընելու , ու գթալու անոնց վրայ . ու երբոր իր միտքը հասու եղաւ՝ բարեպաշտ բաներու վրայ , առաւել վարժըվեցաւ զգալ՝ հեթանոսներուն հոգիներուն փրկութեանը համար աշխատելու :

Իրենց ընտանեացը մէջ մէկ պզտիկ սընտուկ մը ունէին տղաքները , որուն մէջ որ իրենց ունեցած ստակին մէկ մասը կըձգէին . սակայն Մարիամ բաւական չէր սկսել իր ձգած այնչափ ստակը : Իր մեռնելէն տարիի մը չափ առաջ Մարիամ սկսեց ջերմեռանդաբար հոգ տանիլ , հեթանոս-

Ներուեն առաւել օգուտ ընելու համար . ու
երբոր քիչ մը կաղէկնար , շատ ճարպի-
կութեամբ ստակ կը ժողվէր , ու իր քոյրերը
կըյորդորէր որ անոնք ալ նոյն ջանքը ու-
նենան ան բանին վրայ , որ իրենց ժողված
ստակը շատցունեն . թէ որ իր ձեռքը ստակ
անցնելու ըլլար , իսկոյն նոյն սնտուկին
մէջ կը ձգէր անիկա լուծեամբ :

Մարիամ օր մը տանը մէջէն ստակ գը-
տաւ . ու մէկ զուարթութեամբ մը մօրը
հարցուց , թէ աս ստակը ինծի ըլլայ մի , որ
ինչ որ ուզեմ նէ ընեմ , այո՛ , ըսաւ մայ-
րը , խորհելով թէ վերջը իրեն ըսէ որ ,
իրեն վերաբերեալ բան մը ծախու առնէ .
ուրիշ անգամ երբոր մայրը իրեն հարցուց ,
թէ ան ստակը ո՞ր է , ինքը ըսաւ . առա-
քելական սնտուկին մէջը ձգեցի ես անիկա .
վասն զի , աս դիտաւորութեամբ ուզեցի ես
անիկա . մայրը ըսաւ , թէ ես ուզեցի որ
քեզի նոր մատնոց մը , ու ուրիշ պէտք ե-
ղած բաներ ծախու առնես քեզի համար .
Մարիամ ըսաւ . ես տակաւին կրնամ
գործածեր իմին հին մատնոցս , ես կուզեմ
անով Մատուածաշունչ ծախու առնել .
հեթանոսներուն խեղճ տղոցը համար :

Մարիամ շատ կը ցանկար որ , շատ
քարոզիչներ կը թան հեթանոսաց մէջ , ա-
նոնց սորվեցունելու համար . ինչու որ շատ
կը վախնար թէ օրհնեալ Վարկիչին վրայօք
չի լսած կը մեռնին . անգամ մը երբոր ինքը

Տիւանդէր , մայրը ըսաւ որ , քաղաքիս մէջ
երկու կամ իրեք քարոզիչ կան , որոնք
Հնդկաստան կերթանկոր . ինքը մէկ զուարթ
դէմքով մը ըսաւ , սիրելի մայրս , ինծի կը-
թուի թէ քիչ մը բան պիտի խրկես Տիւան-
ան խեղճ հեթանոս տղոցը . ես կրնամ տար
իմ հանդերձներէս , ու քանի մըն ալ իմ
գիրքերէս , ու կըլուսամ թէ օգտակար
ըլլայ անոնց , նաև աղօթք պիտի ընեմ ա-
նոնց համար քանի որ ողջ եմ :

Հատ անգամ մայրը կըլսէր Մարիա-
մին աղօթքը , որ կըսէր՝ թէ հեթանոսները
տուն ունենան , հանդերձ ունենան , բարի
քահանայ ունենան , ու դպրատուն ունե-
նան , ինտոր որ մենք ունինք . ու Աստուա-
ծաշունչ ունենան . ու ասոնցմէ ետև միշտ
կըսէր օրհնէ իմ պղտիկ եղբայրս , ու մէկ
բարի քարոզիչ մը ըրէ անիկա :

1830 . () գոստոսի մէջ , երբոր ուրիշ
քանի մը քարոզիչներ կերթայինկոր Հնդ-
կաստան , Մարիամ այնչափ ուրախացաւ
ու խօսեցաւ անոնց վրայօք , որ մայրը կառք
մը բրունց , ու նաւը տարաւ , որուն հետ
որ քարոզիչները կերթային , որ անոնց
նաւելը տեսնայ . երբոր տուն դարձան ,
Մարիամ ըսաւ մօրը . կարծեմ թէ քարո-
զիչները շատ ուրախ են հեթանոսաց մէջ
երթալու , ու անոնց սորվեցունելու . շատ
ուրախ եմ , որ այսչափ քարոզիչներ կեր-
թանկոր . թէ որ Աստուած իմ կեանքս

չնորհելու ըլլայ, կրճուսամ թէ ես քարոզիչի մը կին պիտի ըլլամ. որովհետեւ ես շատ բան ունիմ մտքիս մէջ հեծանոսներուն ըսելու, օրհնեալ Վրկիչին վրայօք : Քանի մը օր անցնելէն ետեւ՝ բարեկամի մը տուն դնաց Սարիամ տեսու թեան, ու նաև հոն ալ քիչ մը բան խօսեցաւ աս բանին վրայ. խաթունին մէկը ըսաւ որ, գիտես թէ քարոզիչները որչափ չարչարանք կը քաշեն հոն. ու աս ըսելով յատկապէս քարոզիչին մէկուն պատմութիւնը ըրաւ, որնոր շղթայով կապած բանտը դրեր էին, անողորմաբար. ո՛հ, ըսաւ Սարիամ, մայրս կարգաց ինձի անոր վրայօք, սակայն ան ատենը առաւել երկինքին մօտ էր ան, բան թէ հոս ըլլալու ըլլար :

Սարիամ մեծ համարում ունէր Մ. Լ. Լ. տարանին բոլոր պաշտօնեաներուն վրայ խորհելով՝ թէ անոնք շատ օգուտ կրնեն կոր իրենց պաշտօններուն մէջ. ու յատկապէս մէկու մը համար հարցուց՝ թէ ո՞ւր է անոր խանութը. երբոր լսեց՝ թէ խանութ չունէր ան, հասաւ բոլոր իր ժամանակը՝ եկեղեցիին պաշտօնին, ու ուրիշին աղէկութիւն ընելու համար կանցունէ, նմանապէս նաև բոլոր Վրիստոսի պաշտօնեաները՝ անանկ կանցունեն իրենց ժամանակին, ինքը ուրախութեամբ մը ըսաւ, որչափ կուրախանամ, որ անոնք ուրիշ բան մը չունին ընելու, հասաւ միայն Մ. ստ.

ուած պաշտել , ու մարդկանց աղէկու-
թիւն ընելու համար աշխատիլ :

Արովհետեւ ինքը պղտիկ աղ ջիկ մը ըլ-
լալով չէյտէր թէ Վրիստոսի պաշտօնեա-
ները խանութ չեն ունենար :

ԳՎ. Ե :

1830 . ին Հոկտեմբերի մէջ՝ Մարիամ
յանկարծ աւրրվեցաւ . ինքը թէպէտ զու-
արթ կերեւար , սակայն օր ըստ օրէ տկա-
րացաւ . ինքը թէպէտ կար կարելով , ու
երբեմն ալ խաղալով ժամանակ կանցու-
նէր . սակայն շուտով կը հոգնէր , ու ան
կերպ բաներով բնաւ իր սիրտը հանգիստ
չէր կրնար ըլլար . օր մը կէս օրէն ետե
երբոր տղաքը դպրատունէն տուն եկեր
էին , ու սենեակին մէջ կըխաղային , մայրը
տեսաւ որ Մարիամ կուլակոր , ուստի
հարցուց իրեն՝ թէ ինչո՞ւ համար կուլաս
սիրելիս , Մարիամ ըսաւ՝ թէ մէկ երևե-
լի բան մը եկաւ միտքս , ու անոր վրայ կու-
ղէի քեղի հետ խօսիլ , սակայն տղաքը կը-
խաղան ու կըխնդանկոր , անոր համար չի
կրցայ ըսելու . կրնա՞նք քեղի հետ ուրիշ
սենեակ մը երթար . մայրը գիտէր որ Մա-
րիամ շատ տկար էր , ու սրտին մէջ նե-
զութիւն ունէր , ուստի ուրիշ առանձին

սենեակ մը տարաւ : Երբոր ան սենեակը
 գացին , Վարիամ սկսեց նորէն լալ , ու
 ըսաւ . մայր , աս մէկ զուարթ հիւանդու-
 թիւն մը չէ , ինտոր որ մէկալը . ես հիմայ
 այնչափ ուրախութիւն չեմ զգար , որչափ
 որ ան ատենը կըզգայի . հիմայ ան ատենին
 պէս առանձին չենք , ու այնչափ ալ չենք
 կարդարկոր , ու աղօթք ըներ . ես կուզեմ
 որ աս սենեակը գաս , ու աղօթք ընես ին-
 ծի հետ . այսօր այնչափ տկար եմ որ , եր-
 բոր աղօթք ընելու կըսկըսեմ , միտքէս
 կելլակոր , աչքերս գոցեցի որ աղօթք ը-
 նեմ , սակայն տղոցը ձայնը բոլոր ըսելիքս
 մոռցուցին : Սիրելի Վարիամն , ես կուզեմ
 որ աղօթք ընես , ըսաւ մայրը , սակայն
 կարծեմ թէ ծուներ չես կրնար դներ , ին-
 չու որ շատ տկար ես . Վարիամ ըսաւ .
 անանկ կըզգամ թէ պէտք է որ ծուներ
 դնեմ . ու երբոր ծուներ կըդնէրկոր , գեա-
 նին վրայ ինկաւ , որովհետեւ շատ տկար էր
 ինքը . աս վերջինը եղաւ , որ Վարիամ
 ծուներ դնելով ջանաց աղօթք ընելու :

Յայտնի կերևար որ , իր անդամներուն
 զօրութիւնը հետզհետէ կըտկարանարկոր ,
 ու մինչև անգամ սկսեց քալած տեղը իյ-
 նալ : Իրենց բարեկամները անանկ կը-
 կարծէին թէ Վարիամ չի պիտի ըռընտ-
 նայ բնաւ . բայց քանի որ ինքը կըտկարա-
 նար մարմնով , կերևար որ իր միտքը օր
 ըստ օրէ կընդարձակէր , ու յստակ կըլ-

լար , ու շուտով կը պատրասար վէր երկինքին համար :

Մայրը աղէկ հասկըցաւ որ , Մարիամին առանձին ըլլալը՝ շատ օգուտ էր իրեն , ինչու որ կարող կըլլար հանգարտ մտքով երկինքին վրայ խորհելու , ուստի մէկ կանոն մը դրաւ , որ ամէն օր՝ օրը անգամ մը առանձին ըլլայ իրեն հետ . աս կարգը շատ հաճելի եղաւ Մարիամին , ու իր զգացումները միշտ կը զուրցէր իր մօրը՝ մէկ ամբողջ համարձակութեամբ մը : Աւ շատ անգամ կըսէր , սիրելի մայր , առջի պէս երջանկութիւն չեմ զգար . կը վախնամ թէ մէկ նոր հոգի մը չունիմ ես . ու կարծեմ թէ նորէն մեղաւոր կապրիմկոր . աղօթք ըրէ ինձի համար , որ գիտնամ նոր սիրտ ունենալս . ու երջանիկ ըլլալս :

Աս միջոցները շատ կը ճընշէր ինքրդինքը , ու երբոր իր սրտին վրայօք կըխօսէր արտասուք կըթափէր աչքէն , ու նաև շատ կը վախնար՝ թէ գուցէ ինքը ճամարիտ քրիստոնեայ մը չէ : Երկու կամ իրեք շաբաթի չափ միտքը աս վիճակին մէջն էր , իրենց կողմի քարոզիչը կամ հոգևոր հովիւը պայցելութեան կերթար իրեն , ու կըխօսէր իրեն հետ՝ Քրիստոսի չարչարանքներուն վրայ , որ մարդիկներուն մեղացը համար քաշեց անոնք , ու նաև կըմեկնէր իրեն , որ Յիսուս Քրիստոս մեր Տէրը խաչին վրայ զոհ եղաւ , մեզ Աստուծոյ հետ հաշտեցու-

նելու համար . Մարիամ հիմայ առջինէն
 էվելի աղէկ հասկըցաւ որ , իր հոգին սր-
 չափ մեղաւոր ըլլայ , Յիսուս Փրկիչը պիտի
 քաւէ իր մեղքերը , ու փրկէ իր հոգին ,
 թէ որ ճշմարիտ զղջում ընէ , ու հաւատ-
 քով իրեն ապաւինի . ուստի զինքը բոլո-
 րովին իր Փրկիչին ձեռքը յանձնեց , իր
 յոյսը անոր վրայ դնելով : Ըն ատենը շատ
 հանդարտեցաւ իր միտքը , ու անկէց ետե
 բնաւ չի լսուեցաւ որ բան մը խօսի մեռ-
 նելէն վախնալու վրայօք : Երբեմն կրսէր
 թէ , կարծեմ թէ ասկէց ետե բնաւ չի պի-
 տի վախնամ թէ նոր սիրտ չունիմ :

Աոյեմբերի մէջ , որ ան ատենը վեց
 տարւան ըլլալու մօտ էր , իր անդամներուն
 զօրութիւնը այնչափ տկարացաւ , որ ոչ
 կրնար ինքնիրեն ոտքի վրայ կենալ , կամ
 նստիլ , ու ոչ ալ կերակուր ուտել . ինքը
 բնաւ չէր վշտանար իր չի կրնալ քալելուն
 վրայ՝ բացի մէկ անգամէ մը . օր մը եղ-
 բայրներուն ու քոյրերուն հրաման տրը-
 վեցաւ , որ իր սենեակը երթան . որովհետե
 նոյն օրը՝ շնորհակալութեան օր ըսված օրն
 էր , որ ամէնքը մէկտեղ աղօթք կրնէին ,
 երբոր տղաքը իր առջին կրկաղային , ու
 ինքը անոնց խաղալուն կրնայէր՝ մայրը
 բաւ իրեն . տղոյը ձայնը քեզի նեղու-
 թիւն կուտանկոր մի սիրելիս , ո՛հ , չէ մայր
 ըսաւ ինքը զուարճութեամբ մը . ես կու-
 զեմ տեսնալ անոնց խաղալը , ու երբեմն

ալ կուզեմ որ կարող ըլլայի խաղալու անոնց հետ . աս հեզիկ պատասխանին անանկ աղոցեց մօրը սրտին , որ 'ի գութ շարժեցաւ , սակայն բռնեց զինքը , ու ըսաւ . կըյուսամ թէ անոնց հետ չի խաղալու քեզ ապերժանիկ չընէր . ու ինչ որ կըլլակոր քեզի , կըյուսամ որ կըխորհիս՝ թէ բոլորն ալ արդարութեամբ են . ո՛հ , այո ըսաւ սիրելի մայրս , ես ապերժանիկ չեմ , ու չեմ խորհիր թէ Մատուած խստութեամբ կըվարվիկոր իմ հետս . վասն զի ինքը գիտէ որ ես հիւանդ եմ , ու ան կընայ իս ուրիշ տղոցը պէս ընել :

Մարիամ շատ ուրախ կըլլար երբոր մօրը բարեկամները , ու իրենց ընտանիքէն իր քովը կերթային տեսութեան . սակայն առաւել նախամեծար կընտրէր ժամանակին մեծ մասը մինակ իր մօրը հետ անցունել՝ մէկտեղ կարդալու , երգելու , ու աղօթք ընելու համար . աս ընթացքը բոլոր իր վիշտերը մեղմացուց , ու մխիթարեց զինքը բոլոր իր նեղութիւններուն մէջ , որ ժամանակ որ շատ սաստիկ էր :

Մարիամ շատ անգամ կըսէր թէ , օրհնեալ Փրկիչը մօտ է ինձի , ու իս կըմխիթարէ . ու անգամ մըն ալ գիշեր մը երբոր շատ հիւանդ էր , ու մայրն ալ շատ հոգնած էր , իրեն հարցուց՝ թէ արդեօք երթամ , ու առանձին նստիմ մի , որ քիչ մը հոգնութիւն առնեմ , ո՛հ , այո՛ . մայր

ըսաւ ինքը՝ դուն ու հայրս ան ատենն ալ մօտ պիտի ըլլաք ինծի , բայց օրհնեալ Փրկիչը ձեզմէ առաւել մօտ է ինծի :

() ր մը՝ որ սովորականէն էվելի քիչ մը աղէկ էր ուզեց որ իր քոյրերը իր սենեակը գան , ու երբոր անոնք տեսաւ , շատ ուրախացաւ . քիչ մը ժամանակ անոնց հետ խօսելէն ետեւ՝ իրենց յիշեցուց որ , ինտոր որ շատ ատեն կրնէր՝ շնորհակալ ըլլան ան իրենց առողջութեանը համար . ու նաև ըսաւ որ ինքը ամենեւին չի յուսար թէ պիտի ըրընտնայ . ասոնք ըսելէն ետեւ՝ ուզեց որ քիչ մըն ալ իր մօրը երթան , ու ըսաւ անոնց . ձեզի ըսելու բան մը ունիմ . ու կուզեմ որ յիշէք թէ ինչ կրտէ շարականը :

Յիշեցէք որ կայ ահագին դժոխք
Ու սաստիկ տանջանք յաւիտենական
Հոն մեղաւորներն են միշտ բնակող
Կրակին մէջը՝ կապի՝ մ' թու թեան :

Ես չեմ արտաբերէր ասոնք , որովհետև կրվախնամ հոն երթալէն . ես կըյուսամ որ ան երջանիկ աշխարհքը պիտի երթամ . բայց կուզեմ որ յիշէք թէ , թէ որ ճշմարտութեամբ չի զոջաք նէ ձեր մեղքերուն վրայ , հոն պիտի երթաք . ուստի ձեզի պէտք է որ ,

Միրեցէք ուրեմն Յիսուս Վրկիչը
 Չեր բոլոր սրտովը և ծառայեցէք
 Չեր չարութիւնը ու ձեր մեղքերը
 Աերելուն համար և աղօթեցէք :

Ու թէ որ ասանկ չընէք , ամենևին չիպիտի
 կրօնաք ըլլար երկինքը , ինտոր որ նոյն
 շարականը կրսէ .

()դէն 'ի վեր երկինք մը կայ
 Ուրախութեան ու սուրբ սիրոյ
 Եւ երբ մեռնի մէկ սուրբ տղայ
 Աերթայ վեր ան աշխարհն լուսոյ :

Հիմայ խօսք տուէք ինծի , որ պիտի աշ-
 խատիք հոն տեղ ինծի հետ մեկտեղ ըլ-
 լալու :

Մայրը տեսաւ որ շատ կը հոգնիկոր խօ-
 սելով , ըսաւ իրեն , սիրելի Մարիամս կը-
 յուսամ որ քոյրերը միտքերնին պիտի
 պահեն ինչ որ ըսիր իրենց , ու յիշեն բո-
 լոր քու իրենց համար ըրած աղօթքներդ .
 կարծեմ աղէկ է որ ալ չիտօսիս հիմայ ,
 վասն զի շատ հոգնեցար . սիրելի մայրս ը-
 սաւ Մարիամ , տակաւին չի լմնցուցի իմ
 դործքս . ինծի պէտք է որ աղօթք ընեմ ա-
 նոնց համար , որ Մատուած շնորհք մը հաս-
 տատէ անոնց միտքերուն մէջը , որ կարող
 ըլլան յիշելու իմ իրենց ըսածներս , անա-
 տենը շատ ջերմեռանդութեամբ աղօթք ը-

բաւ անոնց համար , ու անանկ ջերմեռան-
դու թիւն մը ունէր որ աղօթքին ժամանա-
կը մէկ կամ երկու անգամ ձեռքը վեր ա-
ռաւ . աս վերջինն էր , որ ձեռքը ինքնին վեր
առնելը տեսնուիցաւ . ինչու որ գրեթէ բո-
լոր ջիղերուն զօրութիւնը գացած էր :

Կիրակի օրմը իրիկվան դէմ ըսաւ , գրե-
թէ կիրակին անցաւ . ու ինծի անանկ կը-
թըւի որ , իբր թէ այս օրը սուրբ չի
պահուցաւ : Եւ այց ես շատ չի պիտի մնամ
հոս , ու երբոր իմ երկնաւոր տունս եր-
թամ , բոլոր ժամանակը՝ կիրակի , այսինքն
հանգստութեան սուրբ օր պիտի ըլլայ հոն .
նաև ուղեց որ բոլորը ժողովրդին աղօթքը
նեղու համար , ու քանիմը անգամ ալ ըսաւ .
կուղեմ որ մեր եկեղեցիին քարոզիչը կան-
չէք հոս , ու գրացիներէն ալ՝ որ հոս
գան , ու մէկ ժողովմը ունենանք հոս . ես
շատ կը սիրեմ լսել անոնց երգելը ու ա-
ղօթելը :

() րմը տեսաւ որ քրոջը մէկը ակամայ
հնազանդեցաւ մօրը մէկ պատուիրանին ,
ու ստի քովը կանչեց անիկա , ու ըսաւ անոր
մտիկ ըրէ թէ շարականը ինչ կըսէ .

Ըն տղաքը որ՝ կը վախնան Տէրէն
Ս արժապետներնուն խօսքը կը լսեն .
Օ՛նողաց խօսքն ալ պատուով կը նդունին
Եւ ուրախութեամբ կը հնազանդին :

ՄՆա աս է որ քեզի ըսել կուզեմ ըսաւ , որ յօժարութեամբ հնազանդիս մօրդ պատուիրանին :

Իրենց դրացիներէն մէկ աղքատ կին մը կար որ հիւանդ էր , որուն վրայ շատ կը վշտանար Սարիամ ուստի օր մը մօրը ըսաւ թէ , ինձի կըթուի թէ , Մատուծոյ համար բան մը ըրած չունիմ ես . ուստի կուզեմ բան մը ընել : Հիմայ ես հիւանդ եմ , ու կարողութիւն չունիմ խեղճ մեղաւորներուն երթալ քեզի հետ , ու խօսիլ անոնց՝ երկինքին վրայօք . Մատուած գիտէ որ կարողութիւն չունիմ ես ասանկ ընելու . սակայն թէ որ հիմայ քիչ մը բան խըրկեմ աս աղքատ կնկանը , ու ըսեմ նաև քեզի ինչ որ պէտք է ըսել անոր , արդեօք նոյն բանը եղած չըլլա՞ր , աս ըսելով դէպի քրոջը դարձաւ , որն որ ինը տարեկան էր , ու ըսաւ անոր . մինակ աս բանին վրայ խորհէ , որ թէ որ ճշմարիտ քրիստոնեայ եղած ըլլայիր , որչափ օգուտ պիտի ընէիր արդեօք ան խեղճ մեղաւորներուն , խօսելով իրենց օրհնեալ Փրկիչին վրայ : Ու հիմայ ալ կրնայիր երթալ աս աղքատ կնկանը՝ զինքը տեսնալու , ու քիչ մըն ալ բան տանիլ իրեն . բայց ո՞չ որչափ կը վշտանամ երբ որ կը խորհիմ թէ , դուն տակաւին ճշմարիտ քրիստոնեայ չես : ՄՆա աս է որ Քրիստոս կուզէ մեզմէ , որ ընենք իրեն համար , ու խեղճ աղքատները տեսնալու երթանք , ու

մեր ունեցածին մէկ մասը անոնց տանք :
 Սիրելի մայրս , քիչ մը բան կը խրկեն ան
 խեղճ կնկանը , ու ըսես իրեն , որ ես խըր-
 կեցի անոնք . ու ես կըսեմ քեզի ինչ որ
 պէտք է ըսել իրեն . ասոնք ըսելով՝ նորէն
 քրոջը դարձաւ , ու ըսաւ . երբոր քեզի կը-
 նայիմ , ու կըտեսնամ որ կըքալես , ու ինչ
 ուզես կընես , կուզեմ որ սիրես Տէրը ,
 ու պաշտես զինքը . ան առաւ ինձմէ իմ ան-
 դամներուս զօրութիւնը բայց չեմ կար-
 ծէր թէ ինձի վնաս մը եղաւ , ինչու որ ես
 երջանիկ եմ . ես կուզեմ Վստուած պաշ-
 տես , քանի որ առողջ ես . դուն մի՛ կարծեր՝
 թէ մինակ իրիկուն առտու աղօթք ընե-
 լովը՝ Վստուած պիտի ներէ քեզի , ու քեզ
 մսիթարէ երբոր հիւանդ ըլլաս , ո՛հ , և
 ասանկ մի՛ կարծեր հապա պէտք է որ ամմէն
 ժամանակ զինքը սիրես , ու ծառայութիւն
 ընես իրեն . Մայրը շատ հաւնեցաւ իր
 խօսքերուն , ուստի ըսաւ իրեն . սիրելիս ես
 կըխորհէի կոր՝ թէ Վստուած որչափ կը-
 սիրէ քեզ , ու դուն ալ որչափ մսիթարոված
 պէտք է որ ըլլաս արդեօք . Վստուած կընար
 որ քու կեանքդ իսկոյն առներ քեզմէ ին-
 տոր որ շատ տղոցը առաւ , որ անոնք ժա-
 մանակ չունեցան խորհելու , թէ որչափ
 չարչարանք քաշեց Քրիստոս իրենց համար ,
 ու նաև գիտնալու , թէ որչափ կընար Վս-
 տուած մսիթարէր զիրենք : Ասրելի է որ
 Վստուած տեսաւ , թէ քու ոտքերդ ճշմար-

տու թեան ճամբայէն պիտի շեղէին , ուստի
ինքը քաղցրութեամբ առաջնորդեց քեզի .
ու ճամբատութեան ճամբուն մէջ հաստա-
տեց քու ոտքերդ . հոս տեղ մարիամ մօրը
խօսքը կըտրեց ըսելով . սիրելի մայր , քու
խօսքերդ շատ մխիթարութիւն տրւին ինձի .
Մայրը նորէն խօսքը ձեռք առաւ ըսելով .
կարելի է որ քու ձեռքերդ ալ անհրաւու-
թիւն պիտի ընէին , ու ինքը տեսաւ առա-
ջուց , ու մարդասիրաբար անոնք ալ մէկդի
առաւ անհրաւու թեան գործքեր ընելէն .
ն՛հ , որչափ բարիքներ կըպարգևէ Աստուած
իմ պզտիկ մարիամիս : Այո՛ մայր , ըսաւ
մարիամ ես երջանիկ եմ . կըսե՞ս ինձի ան
շարականը որ կըսէ թող ես հրեշտակ ըլ-
լամ . մայրը անատենը երգեց մէկ տունը՝
անոր .

Թող հիմայ ջանամ հրեշտակ ըլլալուս
Ս եր ելլամ երգեմ՝ անոնց երգերը
Մի՛ սիրտս՝ ձեռքս՝ ականջս՝ լեզուս
Ահա ան է ձեր բերկրարար գործը :

Աս երգը լմըննալէն ետե՛ ըսաւ մարիամ .
հիմայ աս երգը կըբերգե՞ս , որ կըսէ “ շատ
աղէկ է ” , անատենը դարձեալ երգեց մայրը
իր ուզած շարականը որ անոր մէկ մասն է
հետեւեալ տունը .

Խիստ լաւագոյն է հոն տեղը երթալ
 Ուր որ փորձիչը բնաւ չի կրնար
 Հոն են սրերը հրեշտակներն օրհնեալ :
 Եւ առանգեն իրենց երկնաւոր տաճար :

ԳԼ . Գ . :

Մարիամ շատ անգամ յայտնի երեցուց
 որ , իր միտքը մէկ սուրբ ու ուրախ վիճա-
 կի մը մէջ էր , ու ան ատենը ժամանակին
 մեծ մասը աղօթքը ընելով , ու Մատուծոյ
 օրհնութիւն տալով կանցունէր . անգամ
 մը իրեն անանկ թուեցաւ՝ թէ քանիմը
 ժամէն պիտի մեռնի , ուստի ուզեց որ քոյ-
 րերը քովը դան , ու դեռ անոնք չեկած՝ ը-
 սաւ . ո՛հ , որչափ կուզեմ որ անոնք բարե-
 պաշտ ըլլան , քոյրերը ներս գալէն ետեւ ը-
 սաւ անոնց . սիրելի քոյրերըս , շատ տկար
 եմ ես , ուստի շատ չեմ կրնար խօսիլ ձեզի
 հետ . ես կուզեմ որ , օրհնեալ Փրկիչը սի-
 րէք , կարելի է որ կըխորհիք՝ թէ դժուար
 բան է Մատուած սիրելը , բայց դժուար չէ
 ան , ու շատ դիւրին է . ու նաև օրհնեալ
 Փրկիչը կըսէ . “ Իմ լուծս ձեր վրայ առէք ,
 և ինձմէ սորվեցէք որ՝ իմ լուծս քաղցր է ,
 և իմին բեռս՝ թեթեւ ” : Ինծի խօսք կուտար ,
 որ աղօթք պիտի ընէք Մատուծոյ , որ ձեզի

նոր սիրտ մը տայ . ու ան ատենը որչափ
 դիւրին , ու որչափ հաճելի պիտի ըլլայ ձեզի
 աղօթք ընելը : Ես ալ առաջ կըխորհէի թէ
 դժուար բան է Մատուած սիրելը , ու թէ
 բնաւ մէկ նոր սիրտ մը չի պիտի տայ ինձի
 Մատուած , բայց ան պիտի ըսէ ձեզի , վասն
 զի ինքը ըսաւ . ես կըսիրեմ անոնք , որոնք
 որ իս կըսիրեն . ու անոնք՝ որոնք որ կանուխ
 կըփրնատրուէն իս , պիտի գտնան . քուրերը
 աս խօսքերը լսելով՝ աչքերնին լեցուեցաւ
 արցունքով , ու երբոր Սարիամ տեսաւ
 անոնց աչքին արցունքը , ըսաւ անոնց ա-
 սանկ կըսէ օրհնեալ Փրկիչը :

Թող իրեն պզտի տղաքները գան
 Սէկը չի գայ որ արգիլէ զանոնք
 Ինքը ըսաւ որ անոնք գալ կընան
 Աւ իր օրհնութիւն ժառանգեն անոնք :

Իր ամէնօրհնեալ կենսատու գիրկը
 Պիտ' ըլլայ անոնց տուն՝ որ անվերջ է
 Ինք պիտի սրբէ անոնց արցունքը
 Աղբալ արտասուել ալ ըլլալու չէ :

Սիրելի քոյրերս , թէ որ դուք բարեպաշտ
 քրիստոնեայ էք , ու երբոր երկինքը երթա-
 լու ըլլաք , ան պիտի սրբէ բոլոր ձեր ար-
 ցունքները : Ես միջոցին մօրը սիրտնալ
 շատ լեցուած ըլլալով , չիկրցաւ զինքը
 բռնելու ու երբոր Սարիամ տեսաւ որ

մայրնալ կարտասուէրկոր, մօրը դարձաւ,
ու ըսաւ. սիրելի մայրս Վրիստոս քու
արցունքներդ ալ պիտի սրբէ, վասն զի
ինքը ըսաւ:

Պիտի սրբէ բուն իր փափուկ ձեռքը
Մէնուն աչքէն վազած արցունքը
Յան ու հառաչանք վիշտն ալ ու վախը
Ու մահն ալ պիտի փճանան վերջը:

Մի լար ան ժամանակը ինծի համար սի-
րելի մայրս ըսաւ դարձեալ երբոր ես եր-
կինքը կերթամ, վասն զի անատենը երջա-
նիկ պիտի ըլլամ ես. ան ատենը պիտի
օրհնեմ Մատուած, ինտոր որ կուզեմ: Մ-
տոնք բսելով՝ համբուրեց իր քոյրերը, ու
հրաժարական ողջոյնը ապով ըսաւ իրենց,
կարելի է որ վաղը առտու իս հոս չի պիտի
գրտնաք. որ ես կը յուսամ որ իմ երկնաւոր
տունըս դացած պիտի ըլլամ:

Ինքը այնչափ հոգնած ու շունչը տկա-
րացած էր քոյրերուն հետ խօսելով, որ
մինչև անգամ երևաց թէ դիշերը գլուխ
չի կրնար հանէր: Սակայն տակաւին շատ
օր ապրեցաւ, ու շատ նեղու թիւն քաշեց,
ու ամմէն պարագաները մէկ տեղ կը ցրցու-
նէին որ մահը շատ մօտ է իրեն. երբեմն կը լ-
լար որ, քանի մը ժամ նեղու թիւն քաշե-
լէն ետև՝ կաղեկնար, ու իբր դէմքը առողջ
Սարգու մը դէմքի պէս զուարթ կերևար,

ու անանկ քաղցրութեամբ կողջունէր իր բարեկամը ու իր ընտանեաց ուրախութեանը հաղորդ կըլլար ինքնալ :

Վաթան անուն բարեպաշտ տղայի մը վարքին պատմութիւնը տրպուած էր ան ատենը , ու երբոր կրկարդային ան իրեն՝ անոր մէջէն՝ ինքը շատ օգուտ կըքաղէր , ու կըսէր , ես ալ ճիշտ ասանկ կըզգամ . ու անգամ մըն ալ ըսաւ . ան բարի պզտիկ Վաթանը հիմայ երկինքն է , ու կըյուսամ որ ես ալ շուտով հոն պիտի ըլլամ :

Տղաքը ան պատմութիւնը կրկարդային ընտանեաց մէջ , ու տղին մէկը ըսաւ որ , կերևայ թէ Վաթան Վարիամին պէս է եղեր , որովհետև Վարիամը ճիշտ ասանկ կըխօսի :

Վոյեմբերի մէջ կիրակի օրմը՝ Վարիամ շատ նեղութեան մէջ ինկաւ , այնչափ որ մինչև անգամ խորհեցան թէ՛ անտարակոյս պիտի մեռնի նոյն օրը . նոյն իրիկունը՝ մայրը սենեակէն դուրս ելաւ , ու երբոր ներս եկաւ զարմացաւ՝ երբ տեսաւ թէ՛ Վարիամ անկողինին մէջ նստէր , ու հօրը կարդացմունքը մըտիկ կընէր , որ մէկ երևելի քարոզիչի մը վարքի վրայ կրկարդար :

Ո՛հ , ըսաւ Վարիամ , որչափ երջանկութիւն կըպատճառէ ինձի , երբոր աս բարի Վարդուն աղէկութեանը վրայ կըխորհիմ : Քիչ մը ժամանակ անցնելէն ետև՝ դարձեալ սաստիկ նեղութիւն մը եկաւ վրան ,

ու երբոր նորէն քիչ մը աղէկցաւ՝ ըսաւ ,
 «Տ՛ , Մայր ես նորէն ետ դարձայ . ինչու
 սիրելիս ըսաւ մայրը , կըխորհէիր թէ կը-
 մեռնէիր կո՞ր . ես կարծեցի թէ ըսաւ Մա-
 ըիամ շունչս կըտրեցաւ ու Մատուած շի-
 տակ երկնաւոր տունը պիտի առնէր իս .
 բայց նորէն խրկեց զիս , որ քիչ մըն ալ ապ-
 ըիմ . ու կարելի է որ քիչ մըն ալ էզելի
 նեղութիւն պիտի քաշեմ . ես չեմ ուզէր
 խորհիլ շատ՝ մեռնելու , ու ապրելու վրայ ,
 ես կուզեմ որ Մատուած ինտոր որ կուզէ՝
 անանկ ընէ . գիտեմ որ կրնամ էլելի չար-
 չարանք քաշել , բայց բնաւ չեմ կրնար
 չարչարիլ , որչափ որ օրհնեալ Փրկիչը
 չարչարեցաւ ինծի համար . ան կրնայ իս
 մխիթարեր , ու կըմխիթարէկոր ալ . շատ
 երջանկութիւն կըզգամ . սիրելի մայրս կու-
 ղեմ որ քիչ մը օգնութիւն ընես ինծի . որ
 Մատուածոյ օրհնութիւն տանք . քիչ մը
 երկնային երգեր կերգես մի՞ . ես կուզեմ
 օրհնել Մատուած , «Տ՛ , կուզեմ օրհնել
 անիկա . անատենը մայրը մէկ շարական մը
 երգեց , որ անոր մէկ քանի տունը կըգնենք
 հոս :

Ո՛վ երջանիկ անմահ հոգիք
 Ի՛նչպէս շուտով կերթաքկոր դուք
 Եւ զիս անտէր խեղճ միայնիկ
 Ետեւ ձգած հոս կըթողուք :

Մի ետ մնաք ինծի համար
Քանզի հիմայ կըտեսնամկոր
Որ բարի է Տէրն ու արդար
Եւ պինտ գթած բարեշնորհ :

Եւ երբոր դուք երկինք երթաք
Բոլոր աշխարհներէն ՚ի վեր
Լճէն անոնց փառքը տեսնաք
Ի՞նչ ցանկալի ուրիշ բաներ :

Երբոր բուն ձեր երկիրն հասնիք
Չեր գործքերը որ կատարվին ,
Հանգիստ եղիք մի՛ վշտագնիք
Ետքն աչքերնիդ ինծի նային :

Հոս մօրը երգը ընդմիջեց ըսելով , այժ ,
անուշիկ մայր , երբոր երկնաւոր տունս եր-
թամ , անատենը քեզի պիտի սպասեմ հոն ,
ու որչափ պիտի ուզեմ քեզ տեսնալ :
Մայրը նորէն շարունակեց երգը ըսելով :

Լնատենը մենք ամէնքս մէկ տեղ
Ըլանք , ու պիտի երգենք միաբան
Պիտի օրհնենք մեր Լստուածը մէկ տեղ
Ու մեր թագաւորն յաւիտենական :

Հոս նորէն Մարիամ ընդմիջեց մօրը եր-
գը ու ըսաւ . ո՛հ , այժ Մայր , որչափ եր-
ջանկութիւն կըպատճառէ ինծի , երբոր
կըխորհիմ թէ բոլոր աս ընտանիքով մէկ

տեղ պիտի ըլլանք հոն , ու մէկ տեղ օրհնենք Աստուած . ո՛հ , որչափ երջանիկ պիտի ըլլանք արդեօք անատենը , ես պատրաստ եմ հաճութեամբ՝ չարչարանք քաշելու , որչափ որ Աստուած կուզէ . ինչո՞ւ որ բոլորը քիչ մը ժամանակէն անցնելու բան է : Վանիմը ըստէն ետե նորէն ըսաւ . բոլոր ան քրիստոնեաները՝ որոնք որ աս տունը կուգան , անոնք ալ Աստուած պիտի օրհնեն երկինքը : Աուզեմ որ նորէն երգես անիկա մայր . կերուար թէ աս բոլոր բառը իր միտքը ուրախութեամբ լեցուցած էր , ուստի նորէն ըսաւ . ո՛հ , որչափ կուզեմ որ քրիստոնեաները ազօթք ընեն ան խեղճ մեղաւորներուն համար , որ անոնք ալ կարող ըլլան Վրկիչք սիրելու . որչափ երջանիկ կընէ իս շարականին ան տունը , երբոր կըխորհիմ թէ ան ամիէնքը՝ որոնք որ Աստուած կըսիրեն , բոլորը մէկ տեղ պիտի օրհնեն անիկա երկինքը :

Իր ամիէն օրվան նեղութիւններուն մէջ՝ մեծ դիւրութիւն կամ թեթեւութիւն՝ կուտար իրեն՝ երգելը . ու սուրբ գիրքէն յարմարաւոր հատուածներ կարդալը , և ուրիշ բարեպաշտական գրքերէն կարդալը՝ իրեն հասկըցածին չափ : Մէկ անգգոյշ մարդ մը կընայ խորհիլ թէ Մարիամին՝ ստէպ ստէպ կարդալ ու երգել ուզելը՝ մէկ սովորութիւնէ մը յառաջ կուգայ . զինքը հանգիստ քնացունելու համար . բայց աս

կարծիքը ճշմարտութենէն շատ հեռու էր .
ինչու որ Մարիամ մէկ աժխոյժ ու բոլոր
կարգացուածներուն ու երգերուն աղէկ
ընտրութիւն ընող մէկ աղջիկ մըն էր .
մինչև անգամ իր ընտրութիւնը՝ մէկ սքան-
չելիք մը համարված էր բոլոր իր մօտը ե-
ղողներուն : Հատ հոգևոր երգերը՝ բը-
նաւ չէին հոգնեցունէր զինքը , թէպէտև
միշտ կերգէին իր քովը , ու միշտ իր զգա-
ցումները ու հաճոյքը կը յայտնէր՝ իրեն
սովորական եղած ընտանի երգերովը :
Բայց ուրիշ դիրքերը՝ որոնք որ իր երկան
հիւանդութեանը մէջ շատ կը տրվէին իրեն ,
բնաւ չէր ուզէր որ կրկին անգամ կար-
գացվէին իրեն : Իր լսած բաներուն վրայօք
իր բրած խօսակցութիւնները հաստատու-
թեամբ կերևցունէին որ ինքը անոնցմէ որ-
չափ օգուտ քաղեր էր :

() Ըմբ երբոր մայրը՝ իր մէկ սիրելի երգը
կերգեր կոր .

Ով դուք տղաքներ երկնի Մարգարին
Ձեր ճամբուն մէջը անուշ երգերով
Մրժան օրհնութիւն երգեցէք Քրկչին
Որ փառաւորեալ է գործքով ճամբով :

Մենք կերթանք կոր տուն՝ դէպի Մատուծոյ
Ըն ճամբէն որ մեր հայրերը գացին
Հիմայ երջանիկ են՝ որդիք լուսոյ
Հուտ պիտի տեսնանք երջանկունին :

Մարիամ ընդմիջեց մօրը երգը , ըսելով սիրելի մայրս , աս հատուածը շատ անուշ է ինձի .

Մենք կերթանքկոր տուն՝ դէպի Մատուծոյ
 Ըն ճամբէն որ մեր հայրերը գացին .

Ըսկէց կիմանանք որ , անոնք ալ հիվանդ էին ու շատ նեղութիւն կը քաշէին մեռնելու ժամանակնին . ու աս է ճամբան , որ Մատուած երկինքը կառնէ իր զաւկըները : Ես պատրաստ եմ նեղութիւն քաշելու , ու պիտի ջանամ ալ շատ համբերող ըլլալ :

ԳՎ . Լ :

Գեկտեմբեր ու յունվար՝ երկու ամիսները՝ շատ արագութեամբ վրայ կը հասնէին կոր՝ Մարիամին կեանքը վերցունելու . ինքքը այնչափ տկար էր որ հազիւ թէ իր դուռը միայն կրնար դարձուներ բարձին վրայ . իր հիւանդութիւնը՝ առաւել հմուտ բժիշկներուն արուեստէն դուրս էր . շատ անգամ քիչմը աղէկի կը դառնար , ու ցաւնալ կը դադարէր . սակայն միշտ ստուգիւ կերևար որ չի պիտի ընդնտնայ բնաւ : Իր սովորական բժիշկը շատ անգամ ըսերէր որ , ամիէն ժամանակ մեռնելու վրայ է , ու զարմանա-

լու բան մը չէ , որ ժամանակ որ մեռնելու
 ըլլայ . սակայն կրնայ ըլլար որ քանիմը շա-
 բաթ ալ ապրի , նեղութիւն քաշէ :

Երբոր քիչ մը աղէկնալու ըլլար , կու-
 զէր որ մօրը բարեպաշտ բարեկամները իր
 քովը երթային , ու շատ ալ ուրախ կըլլար ,
 երբոր կըտեսնար անոնք . սակայն իր շնչա-
 ոութեան դժուարութիւնը այնչափ շատ
 էր , որ մինչև անգամ շատ ժամանակ իրեն
 մեծ նեղութիւն կըլլար , թէ որ մէկը իրեն
 մօտը ըլլար . միայն ան ընտանի բարեկամ-
 ները նեղութիւն չէին խտար , որոնք որ իր
 վիճակը դիտէին , ու անոնց ալ որ ժամա-
 նակ ուզէր , կրնար ըսեր որ դուրս ել-
 լան . թէ որ երկու կամ իրեք հոգի ըլլային
 իր քովը , ինքը իսկոյն կիմանար օդին փո-
 փոխութիւնը . ու շատ անգամ ալ կըխընդ-
 րէր որ սենեակին դուռը բանան . որ օդը
 փոխվի . երբեմն կըսէր ո՛հ , թէ կարող ըլ-
 լայի մէկ երկան շունչ մը առնելու . պատու-
 հանը բացէք , որ գուցէ կարող ըլլամ ա-
 ղէկ շունչ առնելու :

Ասանց չարչարվելու չէին կրնար մէկ
 կողմէն մէկալ կողմը դարցունէր զինքը . ու
 շատ անգամ ալ քանիմը ժամ կըթողէին
 անանկ միւս նոյն դիրքովը , ու կըվախնային
 որ չի չարչարվի ամմէն դարձունելուն , ու
 շատ անգամ ալ՝ կըդողար , և երբեմն ալ
 ուշաթափ կըմնար :

Ասանկ նեղութեան ու ձանձրացուցիչ

օրէր անցուց Ս'արիամ, քանիմք ամիս, ու
ինքը բնաւ առողջութիւն չըստացաւ. ինչ-
ևիցէ՝ իր միտքը հանդարտ էր բոլոր աս վի-
ճակներուն մէջ. ու չէր ուզեր ընդնանալ,
ու մեռնելէն ալ չէր վախնար. հապա երկ-
նային խորհուրդներով կրմխիթարէր զին-
քը. ու կրսպասէր երկրէն ազատելու:

Ետևեալ շարականը շատ հաճելի էր
իրեն, ու նաև շատ կանուշցունէր իր զգա-
ցումները: Աւստի շատ անգամ կրկարդային
կամ կերգէին իրեն. ու ինքնալ իբրև հո-
գենորոգ արթնութեամբ մը կրխօսէր անոր
զանազան հատուածներուն վրայ:

Արտեսնամ ուրախ ան անկողինը
Աւր որ մեռանող սուրբը կրպառկի,
Ս'ահին սառուցեալ բաղուկին մէջը,
Չի յայտնէր ինքը տրտունջ մը ցաւի:

Իր դէմքը գուարթ պարզ և պայծառ է
Արզուարձանայ բերկրալից յուսով
Գիտէ ան բաղուկն հաստատ նպաստ է
Որուն վրայ որ հանգչի ապահով:

Ինք իր աչքերը վեր կրվերցունէ
Իր Բարեկամին Ամենակարող
Որուն զօրութիւն վախերէն զերծ է
Եւ մինչև վերջը զինքը պահպանող:

Ինքը գիտէ որ իր Փրկիչը մեռաւ
 Ու մեռելներէն յարուծիւն առաւ
 Ինք կրնայի որ մահն ու գերեզման
 Ա երջին թշնամիքն յաղթըլած մնան :

Եւ յո՛ սիրելի մայր ըսաւ Մարիամ, ես գիտեմ որ Փրկիչը մեռաւ, արգարեւ մեռաւ, երբոր էվելի կըչարչարվիմ, անանկ կըղգամ որ իբր թէ անգամ մըն ալ շունչ չի պիտի կրնամ առնէր. ես կարծեմ թէ աս իմ վերջին անկողինս է. մայր շատ հաճելի է ինձի ան, ինչու որ այսչափ մօտ եմ երկինքին. ու թէ որ Եստուած կրկամի որ մեռնելու ատենս առաւել ևս նեղուծիւն քաշեմ, կըյուսամ որ համբերութիւն պիտի ընեմ, ու գանգատ չիպիտի ընեմ, ինչու որ շուտով պիտի անցնի ան, ու ան ատենը Փրկչին հետը պիտի ըլլամ ես :

Ինքը շատ անգամ աղօթք կրնէր համբերութիւն ունենալու համար՝ բոլոր ան նեղութիւններուն մէջ, որն որ Եստուած աղէկ կըհամարէր իրեն համար. ու երբոր բարեկամները աղօթք ընելու կելլային իրեն համար, ու իրեն կըհարցունէին թէ ինչ բանի համար կուզէ որ խնդրուածք ընեն, ինքը կըսէր որ համբերող ըլլալու համար :

Երբոր շունչ առնելու համար կըտանջըվէր, կուզեր որ շարական երգն իրեն, որ լսելովը էվելի համբերող ըլլայ.

ու շատ անգամ՝ ալ կուզէր որ աս երգը
երգէին :

Ո՛հ , ինչ Աստուածային շնորհք մըն է համ-
բերութիւնը շատ անգամ՝ ալ հետեւեալ
երգը կուզեր լսել .

Սիրելի Տէր իմ՝ մարդասէր Փրկիչ
Թէպէտ շատ դձուն է ան գաւաթը՝ որ
Քու շնորհաձիր ձեռքդ կեցուցիչ
Ինծի կրնծայէ խմել կամաւոր :

Իայց ուրախուք պիտի խմեմ ան
Որ ինծի վնաս մը տալ չի կրնար
Ան ամէն բանը որ քէնէ կուգան
Սնասակար չեն , հապա օգտակար :

Ասոնք ու ասոնց նման շարականներ շատ
ուրախութիւն կուտային փոքրիկ Մարի-
ամին , որ մէկ օրվան մէջ շատ անգամ կը-
սէր՝ քիչմը երկնային շարականներ երգե-
ցէք , որ իս մխիթարեն . Փրկչին չարչա-
րանքներուն վրայ պատմեցէք ինծի , որ ան
ատենը էվելօք կրնամ համբերել իմ ցաւե-
րուս :

Աս հետեւեալ երգը շատ սիրելի էր իրեն ,

Սիրուն բարեկամ մեղաւորներուն
Լսէ , աճեցճճէր քու մեծ շնորհքըդ
Ներէ ան քեզի մօտիկցող տղուն
Որ կուզէ իր սիրան յանձնել քու ձեռքըդ

Տղայ մը ինքնին ու մեղքէն յաղթեալ
 Արցանկայ հասնիլ հանգիստն խոստացել :

Արեսս որ պիտի ծառաներդ պահես
 Եւ աղաղուէ մէջ , որոնց միտքերը
 Եւ որ ծնած տղի կամ ոչխարի պէս
 Պիտի մեծցունես քու ձեռքիդ մէջը

Ի՛նչ խաղաղ վիճակ որ քեզ յուսացեալ
 Ինչպէ՛ս օրհնել է հանգիստն խոստացել :

Մարիամին վրայ հաստատութեամբ կե-
 րևար որ ինքը անանկ կըզգար թէ կեան-
 քին մեծ նպատակը երկինքին համար պատ-
 րաստրվիլ է . ուստի երբոր քիչմը կարո-
 ղութիւն ունենար , քովի եղողները կը յոր-
 դորէր որ Փրկիչը սիրեն , որ կարող ըլլան
 փառաւորեալ աշխարհքը հասնելու :

Տարեգլուխին Մայրը մէկ նամակ մը ա-
 ռաւ իր մէկ բարեկամէն , որուն հետ նաև
 ամմէն մէկ տրդոցը համար զատ զատ տա-
 րեգլուխի ընծաներ կային բաց ՚ի Մարի-
 ամէն , որ անոր համար բանմը չիկար . ան
 բարեկամ խաթունը կարծերէր թէ Մա-
 րիամ կամ մեռած է , կամ շատ տկար , որ
 չիկրնար վայելէր անանկ բան մը . մայրը
 երբոր Մարիամին քովը նստած էր , անա-
 տենը ան ծրարը բերին իրեն , ու բացին
 Մարիամին առջին . Մարիամ բոլոր մէջի
 եղածներուն նայեցաւ , ու հարցուց թէ

իրեն համար ի՛նչ կայ մէջը . Մայրը ըսաւ թէ քեզի համար բան մը չի կայ սիրելիս . մեր բարեկամը քեզի համար ալ բան կը խրկէր , որովհետեւ ան կըսիրէ քեզ , սակայն խորհեցաւ որ դուն շատ տկար ըլլալուդ համար , չի պիտի կրնաս վայելեր անանկ բան մը . բարի ըսաւ Մարիամ . ան աղօթք կրնէ ինծի համար , որ հիմայ տարեգլուխին ընծայէն էվելի է ինծի աղօթքը :

Իր եռանդուն բնաւորութիւնը , որն որ հիւանդութեան միջնորդութեամբը կը յայտնուէր , ճշմարտիւ բերկրալից էր . իր անուշու շնորհակալու սէրը հաստատաբար կը յայտնէր միշտ իր մօրը ըսելով թէ բոլոր իր քովը կեցող ու իրեն սպասաւորութիւն ընողներուն աշխատութիւնը չի պիտի մոռնայ բնաւ :

Միրելի Մայր , անուշիկ Մայր կըսէր . չեմ ուզեր որ ինծի հետ նըստիս աս գիշեր . դուն կրնաս բազմոցը ինծի դառձունել , ու անանկ պառկիլ , որ կրնամ քեզ տեսնար . ես կըսիրեմ քեզի նայել , ինչու որ դուն անանկ կերեաս որ իբր թէ իս ըուրնացունել կուզես :

Մարիամ երկար ժամանակ մահուան մօտ միճակին մէջ ըլլալէն ետեւ . ինտոր որ կերեար , քանի մը օր թեթեւցան իր նեղութիւնները . ու իր միտքը սովորականէն էվելի յստակ ու ուրախ էր . կերեար որ բոլոր քովի եղած բաներուն հետ մասնակից եղաւ

ու հոգ կըտանէր անոնց վրայօք . անգամ
 մը լսեց որ մայրը հրահանգու թիւն կուտար
 իր մեծ քրոջը , ըսաւ ինքը . սիրելի մայր ,
 թէ որ Մստուած իմ կեանքս շնորհէ ինձի ,
 կըյուսամ թէ պիտի գիտնամ որ ինտոր
 յարմարելու է քեզի ամմէն բաներու մէջ .
 աս խօսքէն մայրը վախցաւ թէ Մարիամ
 կըխորհի թէ ինքը իրաւցունէ աղէկ է , ու
 յոյս կընէ ըռըտնալու . և որովհետեւ նոյն
 առտուն ալ բժիշկը որոշաբար ըսէր էր որ
 յոյս չի կայ անոր առողջութեանը վրայ ,
 ու թէ իր դէմքը յանկարծ կըփոխուի անա-
 կընկալ ժամու . ուստի խորհեցաւ որ աղէկ
 պիտի ըլլայ որ իմացունէ Մարիամին ու ըզ-
 գուշացունէ զինքը որ յոյս չընէ նորէն ը-
 ռընտնալու , ու իր խորհուրդները երկին-
 քէն չիդառձուներ . ան ատենը ըսաւ իրեն .
 սիրելի Մարիամն դուն միշտ ամմէն բան
 մօրդ հաճելի ըրիր . ու հիմայ պէտք է որ
 միտիժարվիս անով . բայց գիտես որ դուն
 շատ հիւանդ ես . անանկ չէ մի . այո՛ , սի-
 բելի մայրս՝ ըսաւ Մարիամ . կրկնեց
 մայրը ըսելով . աս առտու երբոր դուն կը-
 քնանայիրկոր , բժիշկը եկաւ . կըհաճիս
 գիտնալ թէ ի՞նչ կըխորհի անքու վրայօ-
 քըդ . այո՛ , ըսաւ Մարիամ . իմ սիրելի աղ-
 ջիկս ըսաւ մայրը . ան կըխորհի թէ դուն
 չիպիտի ըռըտնաս . ու կըվախնամ թէ այլ
 ևս կարող չիպիտի ըլլաս բնաւ մօրդ օդ-
 նութիւն ընելու . ան ատենը քիչ մը կե-

ցաւ , ու նորէն շուտովմը ըսաւ . ի՞նչպէս կըզգաս սիրելիս , երբոր կըխորհիս՝ թէ այլ ևս չի պիտի ըւրտնաս բնաւ : Մարիամ աչքերը գոցեր էր ան միջոցին , ու մայրը կարծեց թէ մէկ տխուր պատասխան մը պիտի առնէ անկէց . սակայն մէկ անսովոր հոգիաւորելով մը ըսաւ . ինչո՞ւ սիրելի մայրս , ի՞նչ պիտի ըլլայ նորէն ըւրնտնայլ , ուրիշ բան չէ կեանքը , միայն թէ մէկ մեղանչակա նութիւն մըն է . որովհետեւ միշտ մեղանչեցի ես , ու թէ որ ապրելու ըլլամ միշտ պիտի մեղանչեմ՝ , գիտես որ , թէ որ մեղաւոր բան մը չընենք ալ նէ գործքով չար խորհուրդներ ունինք մենք ու նաև չենք կրնար բնաւ Աստուած սիրել ու օրհնել անիկա ըստ արժանւոյն , քանի որ աս աշխարհքիս մէջն ենք . բայց սիրելի մայրս երկինքը բոլոր ժամանակ կրնանք օրհնել մեր Տէր Աստուածը . ու ո՞վ առաւել նախապատիւ չընտրէր երկինքը երթալը :

Մարիամ իր հիւանդութեանը առջի ամիսները միօրինակ հանդարտ ու համբերող էր , սակայն իր երկան ու ցաւագին հիւանդութիւնը , ու բոլորովին տկարութիւնը՝ երբեմն արագ ու անհամբերութեամբ խօսել տըւին իրեն . սակայն վերջը կըվշտանար անոր վրայօք , ու կըսէր . ես մէկ երջանիկ օր մը շունեցայ . առտու մը մօրը ըսաւ , ես աղօթք ըրի , ու չեմ կարծեր որ անգամ մըն ալ անհամբերու-

Թեամբ պիտի խօսիմ . աս օրերս բաւական աղօթք չըրի . բայց կը յուսամ որ երբոր բաւական աղէկ ըլլամ , կարող պիտի ըլլամ աղօթք ընելու :

Յունվարին վերջի օրերը՝ գրացիներէն մէկ պառաւ կնիկ մը մեռաւ . մեռելը տանելու ժամանակը Մարիամ ուղեց որ պատուհանին առջին տանին զինքը , որ հանդէսը տեսնայ . մայրը վախցաւ որ չըլլայ թէ իրեն զգացումները գրգռվի ու Մարիամ ալ իր փոփոխութիւնը տեսնալով՝ ներհակ դաղափար մը ունենայ , սակայն որեւիցէ , հաճեցաւ որ իր աղջիկը պատուհանին առջևը նստի , ու նստած տեղէն լռութեամբ մը նայեցաւ . կերևար թէ Մարիամ յատկապէս փափաք մը ունէր ճաղը տեսնալու . ուստի մինչև որ վերջը եկանէ կեցաւ . ու ետքը ըսաւ . սիրելի մայրս աս տեսարանը ինձի տրտմութիւն չի պատճառեց . մայրը պատասխանեց թէ ուրախ եմ որ չի տրտմեցուց քեզան . ի՞նչ երջանիկ եղած պիտի ըլլայ ըսաւ Մարիամ ու ի՞նչ հանգիստ , ու ապահով փրկչին ձեռքին մէջը ըլլալ . ես կուզեմ որ հոն եղած ըլլայի :

1831 ին Վեստրվարին սկիզբները՝ Մա-
րիամին հիւանդութիւնը կերևար որ շատ
շուտով պիտի վերջանար . ու աս ժամանա-
կէն գրեթէ ամսէն օր կըսպասէին որ պիտի
մեռնի . իր շնչառութեան նեղութիւնը՝ բո-
լոր առջիններէն էվելի էր . ան միջոցին . ու
երկու օրերուն մէջն ալ՝ կը խորհէին որ
միշտ մեռնելու վրայ էր . սակայն որև
իցէ՛ ամիսու կէսի չափ իր կեանքը եր-
կընցաւ , որ ան զարմանք մը կը համարուէր .
մահուան վրայ իր քովը կը խօսուէր անանկ
ընտանութեամբ մը , որ իբր թէ իր մէկ բա-
րեկամը պիտի գայ իրեն տեսութեան , ու
իր քովը եղողներուն մէկ քանին խնդակից
եղան իրեն հետ , որ Մարիամ իր յաւի-
տենական տանը մօտն էր . որ ժամանակ որ
քիչմը աղէկնալու ըլլար . սուրբ գիրքէն .
կամ ուրիշ բարեպաշտ գիրքերէն պիտի
կարդային իրեն , ու խօսակցէին հետը՝ զին-
քը մխիթարելու , ու իր համբերութիւնը
աճեցունելու համար . բարեպաշտ մէկումը
վարքին պատմութիւնը որ իրեն կը կար-
դային , կերևար թէ ան շատ յարմար էր ի-
րեն , ու անոնցմով կը մխիթարուէր
ինքը :

Անգամ մը բարեպաշտ տիկինին մէկը աս

Տեսնեալ Տատուածը կարգաց իրեն , որ
կրսէր “Աէս օրէն ետե կերեար թէ իբր
Քրիստոս կրսէր ինծի . շատ անգամ զար-
մացար ու անհամբերութիւն բոլր իմ ա-
րաջնորդած ճամբուս մէջ , բայց Տիմայ
ի՞նչ կը խորհիս անոր վրայ” . Տոս տեղ կե-
ցաւ կարգացող տիկինը . ու ըսաւ իրեն .
սիրելի Մարիամս , կարծեմ թէ դուն ալ
շատ անգամ զարմացար , քու կին այսչափ
երկար ժամանակ Տիւանդ ըլլալուդ , ու
այսչափ նեղութիւն քաշելուդ վրայ . անանկ
չէ մի՞ . Մարիամ աս միջոցին հոգնած էր ,
շնչառութեան համար . ու միայն կարճ
խօսքեր կրնար զուրցել , անալ շատ նեղու-
թիւնով . սակայն մէկ խոնարհ ու անուշ
նայվածքով մը վեր նայեցաւ , ու ըսաւ .
չէ :

Սիրելի աղջիկը աս օրերս գրեթէ կը
խըղզըվեր իր շնչառութեան նեղութենէն .
ու չորս ամիսի մօտ էր որ շարունակ պառ-
կած էր , առանց մէկ մատր անգամ շարժե-
լու կարողութիւն ունենալով . ու իր վը-
րայօքն ալ՝ բնաւ յոյս չի կար ըռնտնալու ,
միայն մահուան մէջ . ու տակաւին չէր
զարմացած իր վիճակին վրայ , որուն մէջ
որ գտնուվեր էր . իր պատասխանիին մէջ
կեղծաւորութիւն չի կար , վասն զի հար-
ցումին եղանակը անանկ էր , որ վերինէն
տարբեր պատասխանի մը առնել կը յու-
սացվէր . մանաւանդ որ մէկ պզտիկ աղ-

ջիկ մը բնականաբար պիտի ուզէ խորհելու զգալ , ինտոր որ կըխորհէր ու կըզգար ան ընտրեալ մարդը : Բայց ան չէ . պատասխանը՝ որ պզտիկ Մարիամը տըւաւ , ան իր տղայական անկեղծութիւնովն էր :

Պարձեալ ուրիշ հատուած մը կարդաց տիկինը նոյն գիրքէն . որուն մէջ որ կըսէր “ու հիմայ որ կաղ եմ” , ու կարող չեմ շարժելու , բոլոր կեանքիս մեջ եղած առջի ժամանակէս էվելի երջանիկ եմ” . ան ատենը տիկինը հարցուց Մարիամին թէ ինքն ալ ասանկ կրնայ մի՞ ըսեր . այո , ըսաւ Մարիամ հիմայ . ինչ , ըսաւ տիկինը . առողջ եղած ու ընկերներուդ հետ խաղացած ժամանակէդ էվելի երջանիկ ես մի՞ հիմայ . այո՛ , այո՛ , ըսաւ Մարիամ դարձեալ :

Ուրիշ բարեպաշտ տիկին մը , որն որ շատ ժամանակ Մարիամին քովը կեցեր էր , ու Մարիամ ալ շատ կըսիրէր զինքը , պատմեց աս հետեւեալ հատուածները՝ որոնք որ Մարիամին կըվերաբերէին . “ մէկ օգտակար արդիւնք մըն է ինծի ան , որ բնաւ չի կրցի հաճեցընել պըզտիկ Մարիամը իր սաստիկ նեղութիւններուն մէջը անգամ , որ ըսէ թէ , կուզեմ որ նորէն ըռըանամ . նաև բոլոր աշխարհային զուարճութիւնները , ու իր սիրելի մօրը ընկերութիւնը անգամ չէին կրնար զինքը հրապուրել . անոնք վայելելու համար միշտ պատասխանը

աս էր թէ ես էլիլի նախապատիւ կրնորեմ
երկինքը երթալ , աս աշխարհքըս եր-
կինքին սէս մէկ փառաւ որեալ աշխարհք մը
չէ :

Արիշ բանմըն ալ՝ որ իս կըզարմացու-
նէր , իրեն հաստատարար մահէն չի վախ-
նալն էր . մէկ վարանական երկիւղ մը չի
տեսայ բնաւ իր վրան . երբոր մահուան ու
երկնային շարականներ կրսէի իրեն , որոնք
որ անձանձրոյթ բերկրութեամբ մտիկ կը-
նէր ինքը , առաջին անգամին զանց կաունէի
ան հատուածները , որոնք որ մահուան ու
գերեզմանի վրայ կրխօսէին . սակայն վերջը
հասկըցայ որ սէտքը չէ եղեր ասանկ
ընել :

Երկուշաբթի օր մը՝ երբոր իրեն տեսու-
թեան դացի , խօսեցայ իրեն կիրակի օր-
վան դպրատան վրայօք , ու ըսի՝ որ աշա-
կերտներուն պատմեցի իր վրայօքը , ու թէ
ինտոր Վրկիչը կըմխիթարէ զինքը . ինքը
ըսաւ . ես կուզէի որ կարող ըլլայի խօսիլ
անոնց հետ , ես կարող չեմ խօսիլ անոնց
հետ , սակայն կրնամ աղօթք ընել անոնց
համար :

Փետրվարի մէջ՝ կիրակի օր մը՝ որ շատ
սաստիկ ցուրտ էր , Մարիամ այնչափ նե-
ղութիւն քաշեց շնչառութեան համար ,
որ մինչև անգամ պատուհանը բացին , ու
անկողինն ալ դէպի ան կողմը դառցուցին ,
երբոր քիչմը հանգստացաւ , ըսաւ . սիրելի

մայրս եկոր իմ քովս նստէ , ու քիչմը շա-
րական երգէ իս մխիթարելու համար . ես
կարծեմ թէ երկինքին մօտ եմ . ո՛հ , ո՛ր-
չափ կուզեմ որ իմ եղբայրներս ու քոյ-
րերս ծառայութիւն ընեն Աստուծոյ . սիրե-
լի մայրս . անոնց ամմէն օր Աստուածա-
շունչ կարդալը ու աղօթք ընելը կրտսննա՞ն
մի . կարելի է որ անոնք քեզի կրսեն թէ
այ՛ո՛ մայր , մէնք կրկարդանք ու աղօթք
կրնենք . բայց ես կուզեմ որ անոնց ընելը
տեսնաս դուն . ես կուզեմ որ բոլոր մեր
դրացիները Սուրբ ու բարի Քրիստոնե-
ականքը ըլլան . ու երբոր ես երթալու ըլ-
լամնէ , պիտի ջանաս մի՞ անոնց օգնելու :

Ինքը շատ կուզէր որ խօսի աս օգտակար
նիւթերուն վրայօք , սակայն կերեւար որ ա-
նանկ կրողար թէ պէտքը չէ շատ խօսիլ :

Իր կեանքին վերջի քանի մը շաբաթնե-
րուն մէջ , անանկ վատեցաւ ու իր ջիղե-
րը այնչափ տկարացաւ , որ երբոր անծա-
նօթ մէկը քովը կուգար իրեն օգնութիւն
ընելու , ինքը շատ նեղութիւն կիմանար .
ուստի գիշերները իր ընտանիքէն կրկենա-
յին քովը , որ ան կերպով քիչմը հանգիստ
կրլար ինքը :

Անգամ մը երբոր իր եղբայրը կրսպասէր
քովը ըսաւ . նայիմ թէ ո՛րչափ ժամանակ
առանց մօրս կրնամ կենար , որ ան ալ քիչ-
մը հանգչի . աս խօսքին վրայ քիչմը անցնե-
լով , կրկին ըսաւ կրվախնամ թէ նորէն

մէկ աղէտալի դարձում մը կուգայկոր վրաս . ես գիտեմ որչափ դեղ տըլին ինձի . ու թէ որ կրնաս կաթեցուներ անիկայ , կըխըմեմ ես , առանց մայրս արթընցունելու . վերջը երբոր մայրը արթընցաւ , քիչմը սուրճ տըլաւ իրեն , ու ինքը ըսաւ , Աստուած է , որ աս հաճելի համը տըլեր է սուրճին մարդը չի կրնար ըներ անիկա . ո՛հ , որչափ բարի է Աստուած . որ այսչափ բարիք պարգևեր է մեզի , որ մենք հոս երջանիկ ըլլանք . աս ըսելով սկսեց քանի մը բան ծամել , որոնք որ յատկապէս կըսիրէր ինքը . ինչպէս թուռունճ , լիմծն , թուղ և՛ , ու ըսաւ . մենք չենք կրնար բուսցուներ անոնք , հապա անոնք բոլորն ալ Աստուծոյ գործքերն են :

Աս խօսքերը ընդմիջեց տեսնալով քիչ մը փայտ որ կրակին վրայ դրած էր . ուստի ըսաւ աս փայտն ալ նաև Աստուած ըրաւ որն որ ծառէն կըլլայ . ո՛հ , ի՞նչ բարի է Աստուած . ես կըյիշեմ որ անցած տարի երբոր կառքով կերթայի ինտոր աղոր կերևային լեռները ու ծառերը , որչափ շատ էին անոնք , ու որչափ ալ բերկրալի նաև ան անուշիկ պղտիկ ծաղիկները՝ որոնք որ գետնին վրայ բուսցուց Աստուած , Աստուածաշունչին մէջ կըկարդանք որ բոլոր աս բաները Աստուծոյ գործքերն են . ինտոր որ իմ ծնողքս ալ ասանկ սորվեցուցին ինձի . թէ որ շատ մարդիկ ինձի ըսեն

Թէ Մատուած չըրաւ անոնք , բնաւ չըպիտի
հաւատամ ես անոնց խօսքին :

Մայրը նաև աս նիւթին վրայ սկսեց խօսիլ
Թէ նոյն պատճառով դուն կը հաւատաս
որ մէկ երկնային աշխարհք մը կայ . ուր որ
Մատուած ու հրեշտակները կը բնակին
ու հոն պիտի ընդունի օրհնեալ Վրկիչը ան
ամմէնքը . որոնք որ կը սիրեն զինքը :

Մարիամ անուշիկ մը վեր նայելով ըսաւ .
ո՛հ , այ՛ո մայր . քիչմը ատեն լուռ կենալէն
ետև ուղեց որ վերցունեն զինքը , որ համբուրէ
մայրը , որնոր հաղիւ Թէ կրնար ընէր իր
շնչառութեան դժուարութեան պատճառաւը ,
մայր ըսաւ դարձեալ . մաքիս մէջ քանի
մը բան կայ , անոնք կուզեմ ըսել քեզի .
որոնք որ երկնային աշխարհքին վրայ են .
ես աս գիշեր մէկ երջանիկ գիշեր մը
անցուցի . ես չի կըցի քնանալու . ու երկինքին
վրայ խորհեցայ , մայր իմ երկինքը կերևարկոր
ինձի ան բարձր աղբոր լեռներուն պէս ,
ուր տեղ որ հրեշտակները կերթան ու
կուգան . ասանկ ըսելով , ըսել չեմ ուղէր
Թէ երկինքը տեսայ ես չկտամ Թէ ինտոր
զրուցեմ քեզի , սակայն շատ երջանկութիւն
զգացուց ինձի ան . կը յուսամ որ Մատուած
շուտով պիտի խրկէ իր հրեշտակները ու
հոն առնէ իս :

Եղբայրը սենեակէն դուրս ելլալէն ետև , ըսաւ .
աս գիշեր եղբայրս աղէկ հոգ տարաւ իմ
վրաս քաղցրութեամբ իմ բարձս շտկեց ,

ու գիւրու թեամբ մը դառցուց իս . ես իրեն
 օգտակար բաներ խօսեցայ , կը յուսամ թէ
 անոնց մէկ քանիններուն վրայ կը մտնըտայ
 կոր . ու կը հաւատամ որ Աստուած
 իրեն համար ըրած աղօթքս պիտի լսէ . չես
 խորհի՞ր որ պիտի լսէ ինձի Աստուած ,
 երբոր սաստիկ ջերմեռանդու թեամբ աղօթք
 ընեմ իրեն . ես կուզեմ որ անոր անունը
 կենաց Վառին գիրքին մէջը գրվի :

Քիչ մը անցնելէն ետե դարձեալ ըսաւ .
 սիրելի մայրս , երկինքի վրայօք երգ մը կեր-
 գես մի՞ ինձի . ան ատենը մայրը երգեց աս
 հետեւեալ երգը .

Չե՞նք մի բնակիր ամպերուն տակը
 Ու շատ քիչ գիտենք մեր սիրած Տրը
 Ինչո՞ւ պի՛ սիրենք աս աղօտ լոյսը
 Երբ պայծառ լոյս է վերի օշխարհը

Հոն պիտի զինքը տեսնանք դէմ առ դէմ
 Հոն պիտի գիտնանք մեծ Անձանօթը
 Եւ իր շնորհքով Յիսուս լուսաճեմ
 Կը լուսափայլէ փառաց աթուր :

Ինչ անուշիկ է ըսաւ Վարիամ , աս ան
 տեղն է , ուր տեղ որ բլալ կը ցանկամ :

Աս ըսելով , դարձեալ ինքը երգեց
 հետեւեալ երգը :

Ո՛վ օրհնեալ Յիսուս պատահէ ինծի
 Լ՛նմա՜հ Լ՛ստուծոյ անդրանիկ Որդին
 Փոքրիկ տղայ մը դուն հովուես պիտի
 Սօտեցունես զիս իմ Լօրս աթոռին :

Ա՛ երջը ըսաւ . օրհնեալ Փրկիչը դէմ կել-
 լայ ճամբուն վրայ ան ամէնուն , որոնք
 որ կը սիրեն զինքը անանկ չէ՞ մի :

Գ՛Լ . Թ :

Սարիամին կեանքին վերջին վեց շա-
 բաթներուն մէջ քանի անգամ տուն ու
 կերթար աս գիրքը գրողը կը խորհէր որ
 արդեօք Սարիամին հոգին գեռ մարմինին
 բանտին մէջն է , թէ երջանկութեան ու
 լուսոյ աշխարհը թըռեր է իր պառկած սեն-
 եակին դուռը սովորաբար բաց էր . ու եր-
 բեմն ալ պատուհանը նաև եղանակը սաստիկ
 ցուրտ եղած ժամանակն ալ , որ դիւրու-
 թեամբ շնչառութիւն ընէ , իր սենեակը
 ամենեկին մահուան սենեակի չէր նմաներ .
 վասն զի , մայրը միշտ ցած ու անուշ ձայ-
 նով կերգէր ու Սարիամ ալ թէ և կարո-
 ղութիւն ալ չունենար խօսելու , միշտ ու-
 ըտիս ու անուշ դէմքով կը բարեւեր իս , օր
 ըստ օրէ նոյն վիճակին մէջ կը գտնայի զին-
 քը , մխիթարված Փրկչին խոստմունքներու

վը , ու բոլոր իր վիշտերէն աղատված երկինքին պայծառ յոյսովը :

Քանի մը անգամ հաճելի չեղայ իրեն երբոր մօրը հետ խօսակցութեան պարապեր էինք , որնոր իր մտացը հոգևոր վիճակին չիյարմարեցաւ . ինքը նեղութիւն իմանալով մը նայեցաւ մեզի ու քաղցրութեամբ մը ըսաւ . Փրկչին վրայօք քիչ մը շարական կըսէք մի ինծի :

Յայտնի է որ իր դիտաւորութիւնը մեր խորհուրդները՝ երկիրէն երկինքը վերցունել կուզէր . կարդալը ու երգելը՝ այցելութեան եկող բարեկամներուն հաստատուն գործքերն էին ու աս պատճառաւ շատ անգամ ինքնիրէն մէկ պարբերութիւն մը կերգեր ու անով ուրիշներուն կիմացունէր ինչ որ կուզեր ըսել անոնց . գրեթէ իր ամմէն օրվան ուղած երգը աս էր :

Ո՛վ Յս ֓ Փրկիչ իմ հոգւոյս Սիրող
 Թող թուչիմ գիրկըդ որ կենսատու է
 Երբ գիմէն կատղած ալիքներն կլլող
 Երբ փոթորիկը տակաւին բարձր է :

Բոլոր յոյսերս վրադ դրված է
 Եւ օգնութիւնս քէնէ կընդունեմ
 Իմ անպատասպար գլուխս ծածկէ
 Թեկիդ շուքովը , որուն կարօտ եմ :

Ես չունիմ բնաւ ուրիշ ձեռնտուր
 Եղկելի հոգիս կրկախով քէնէ
 Ս՛հ, Տէր իմ՝ դու զիս մինակ մի՛ թողուր
 Վաջալերէ զիս և մսխիմարէ

Օ՛ւած կէ զիս ո՞վ դու Փրկիչ իմ ծածկէ
 Ս՛ինչև որ կեանքին փոթորիկն անցնի
 Աւաւահանգիստը զիս առաջնորդէ
 Բնդունէ՛ հոգիս դու՛ ՚ի վախճանի :

Մայրը օր մը ըսաւ իրեն . սիրելիս , երբ
 բոր նեղութեան մէջ խնայու ըլլաս նէ ,
 ինչո՞ւ համար աս շարականը ուրիշներէն է .
 վելի նախապատիւ կընտրես , Մարիամ իս-
 կոյն աս երկու տողերը զուրցեց ,

Ո՞վ Յիսուս Փրկիչ իմ հոգւոյս սիրող
 Թող թռչիմ՝ գիրկըդ՝ որ կենսատու է :

Ես պարբերութիւններուն գրեթէ ամէն
 բառերը ծանր ու ազդուութեամբ մը ըսաւ .
 ու լմննալէն ետեւ դարձեալ ըսաւ . երբոր
 ես ցաւ չունենամ , ու դուն ալ կըսկըսիս
 երգել , “Յիսուս” , ըսելով , ինծի խոր-
 հել կուտայ ան մարդասէր ու օրհնեալ
 Փրկիչին վճայօք . ու երբոր կըսես թէ “սի-
 բող իմ հոգոյս” անատենը կըխորհիմ որ
 ան կըսիրէ իս . ու երբոր կըսես թէ “Թող
 աուր որ քու գիրկդ թռչիմ” , ան իմ երկ-
 նաւոր տունս կընշանակէ , ու կըյուսամ

որ օրհնեալ Փրկիչը շուտով հոն պիտի
առնէ իս :

Անգամ մը տեսաւ որ քրոջը մէկը բան մը
կրնէ , որն որ բոլորովին ուղիղ չէր . ուս-
տի ըսաւ իրեն . ո՛հ քոյրս . երբ պիտի տես-
նամ արդեօք , որ մօրս ուղածին պէս ըլ-
լաս . սիրտս կտորած պիտի մեռնիմ , թէ որ
մեղաւոր մնալու ըլլասնէ . ինտո՞ր երջանիկ
կրնաս ըլլար , երբոր գիտնաս թէ Աստ-
ուած չես սիրէր . որն որ բոլոր քու կեան-
քիդ մէջ խնամեր է քեզ . ու կերակուր
հանդերձ , ու նաև բոլոր քու ունեցածներդ
տրւեր է քեզի . կարելի է որ պիտի ըսես թէ
հայրս ու մայրս կուտան ինձի անոնք .
սակայն Աստուած է , որ վար կրնայի եր-
կինքէն , ու հոգ կրտանի քու վրադ , ու
դուն ի՞նչ ըրեր ես արդեօք իրեն համար .
դուն գիտես որ եթէ ըսես Աստուած կը-
սիրեմ , ու իր պատւիրանքները չի պա-
հես , սուտ ըսած կըլլաս , ու ճշմարտու-
թիւն եղած չըլլար քու վրադ . ասիկա ես
չեմ ըսողը քոյրս , հապա Աստուածաշունչ
նէ որ կըսէ . կուզեմ որ ինձի ըսես , թէ
Աստուած չեմ սիրեր . ես գիտեմ որ
դժուար պիտի ըլլայ ասոր պատասխանը
տալ , սակայն կուզեմ որ պատասխան տաս
ինձի . քոյրը լուռ կեցաւ . մայրը ըսաւ որ
սիրելիս պէտք է որ պատասխան տաս Ա՛ա-
րիամին . ան՝ քու աղէկութեանդ համար
կըխօսիկոր :

Քոյրը պատասխան տալէն ետև , Սարիամ շարունակեց իր խօսքը , ըսելով . առ իր պատուիրանքները չի պահելէն առաջ կուգայ . դուն սկսէ անոր պատուիրանքները պահելու , անատենը պիտի սիրես անիկա . ու նաև շատ դիւրին պիտի ըլլայ քեզի հընադանդ ըլլալ անոր , ես երջանիկ կըմեռնիմ , թէ որ դուն մէկ նոր սիրտ մը ունենաս . ու անատենը մսիթարութիւն մը պիտի ըլլաս դուն՝ մօրերնուս :

Իր եղբայրը , որն որ ճեմարանին աշակերաններուն մէկն էր , աս միջոցին ներս մըրտաւ . ու ան պատճառաւ խօսակցութիւնը ընդմիջեցաւ . Սարիամ շատ անգամ խօսած էր իր մօրը՝ աս եղբօրը համար , որ շատ փափաք ունի անոր հետ խօսելու . սակայն ան իրմէն շատ մեծ ըլլալուն ու նաև միշտ տունը չըլալուն համար , կերևար թէ Սարիամ չէր համարձակեր ազատաբար խօսելու անոր հետ , ինտոր որ մեկալներուն կրնէր . մայրը գիտեր որ իր կեանքը անստոյգ վիճակի մէջ է , ու ինքն ալ քիչ ժամանակ կարողութիւն կունեննար խօսելու . ուստի ըսաւ իրեն . սիրելիս , հիմայ պատեհո՞ւթիւն ունիս խօսելու եղբօրդ հետ . Սարիամ անատենը վեր նայեցաւ դէպի եղբօրը , ու մէկ սքտառուչ ձայնով մը ըսաւ իրեն . սիրելի եղբայրս , կուզեմ որ դուն մէկ բարեպաշտ քրիստոնեայ մը ըլլաս . ու բոլոր քու կեանքիդ մէջ Աստուած սիրես ,

ու ծառայու թիւն ընես անոր . վասնզի ան
 է որ այսչափ տարի է խնամք կրտանի քու
 վրադ , ու նաև հիւանդ եղած ատենդ ալ .
 Աստուած էր . որ քու երկան հիւանդու
 թենէդ ըռնացուց քեզ . ու հիմայ կուզեմ
 որ խորհիս իր վրայօք , ու պաշտես զինքը .
 կրխոստանան ինձի , որ դուն բնաւ չիպիտի
 թողուս Աստուած , մինչև որ քեզի գիտ
 ցունէ թէ դուն մէկ ճշմարիտ քրիստոնեայ
 մըն ես . հոս տեղ քիչմը սպասեց , որ եղ
 բօրմէն պատասխան մը առնէ . թէ որ ա
 սանկ պիտի ընեսնէ , պէտք է որ սկսիս ջեր
 մեռանդու թեամբ աղօթք ընել Աստուծոյ ,
 ու քանի մը անգամ օրը աղօթք ընելու է ,
 ինտոր որ 'Վաւիթ բրաւ . անիկա' օրը եօթը
 անգամ աղօթք կընէր . ու քեզի պէտք է որ
 շատ կարգաս Աստուածաշունչը . անատե
 նը մայրը ըսաւ . Մարիամ , գիտես որ
 դուն երկնաւոր տանդ մօտ ես , ու եղբայ
 րըդ ալ շուտով պիտի երթայ , հիմակվընէ
 կորոչես , որ ով պիտի առնէ քու պզտիկ
 Աստուածաշունչդ . ինտոր որ կուզես նէ
 անանկ ըրէ սիրելիս . եղբայրը անգամ մը
 ըսեր էր որ կուզեմ որ քոյրս ինձի տայ իր
 Աստուածաշունչը , երբոր ալ ևս գործա
 ծելու չըլլայնէ :

Մարիամ աչքերը գոցեց , ու քանի մը
 րոպէ կենալէն ետև , մէկ համարձակու
 թեամբ մը ու խորունկ մտմբտուքով մը ը
 սաւ . ես կուզեմ որ իմ Աստուածաշունչս

անոր տրվի , որն որ առաջինը պիտի ըլլայ տէրը փրնտըռելու . ու նաև շատ պիտի կարգայ անիկա , ու շատ ալ աղօթք ընէ . ինծի զեն չունի , ո՛վ որ առնէ անիկա . մեծը թէ պզտիկը :

Աս խօսքերուն վրայ բոլորն ալ զարմացած ու լուռ կեցած էին , որ նոյն միջոցին մայրը ըսաւ . սիրելի զաւակներս , պէտք է որ մէջերնիդ որոշէք հիմայ . ես ամենևին բան մը չեմ կրնար ըներ անոր վրայօք :

Աս խօսքերէն մէկ կամ երկու օր ետև Մարիամ իր քուրերուն ըսաւ . ես քիչ մը ժամանակ ունիմ հոս մնալու . հիմայ գիտցուցէք ինծի , որ տէրը պիտի բրնտըռէ՞ք մի ձեզմէ մէկը չի գայ մի , որ Աստուածաշունչս առնելու համար գայ . ու ես չեմ ուզեր որ անանկ խորհիք թէ միայն մէկը կրնայ ստանար անիկա . իմ Աստուածաշունչիս պէս շատ Աստուածաշունչներ կան . սիրելի մայրս . խօսք կուտամ ինծի , որ երբոր ես երկինքը երթամ , ու թէ որ անոնք ալ ճշմարտապէս բարեպաշտ քրիստոնեայներ ըլլան , ու ասանկ քեզի ըսելու ըլլաննէ , իրենց համար իմինիս պէս Աստուածաշունչներ ծախու կառնէս , ու նաև կուզեմ որ անոնց անուններն ալ ու իմ անունս ալ գրվին անոնց մէջ :

Իր մեռնելէն քանիմը օր առաջ . քիչմը ժամանակ լուռ պառկելէն ետև , յանկարծ բռնէն արթընցածի մը պէս սթափեցաւ , ու

ըսաւ . մայր , մեծ եղբօրս վրայ կըխորհէի .
կոր որ հիմայ հոս չէ , ու ճեմարանը
գացած է . ու ես կուզեմ որ գրես անոր ,
ու ըսես իրեն թէ ես այլ ևս անգամ մըն
ալ չի պիտի տեսնամ զինքը , սակայն իրեն
պէտք է որ մեղաւոր չապրի . պէտք է որ
Մատուածաշունչ կարգայ . ու ամմէն օր ա-
ղօթք ընէ . նաև կուզեմ որ ինծի իմացունէ
թէ պիտի սկսի՞ մի ջերմեռանդութեամբ
ասանկ ընելու , որ ան ատենը երջանիկ պի-
տի մեռնիմ ես . ըսէ իրեն որ երբոր երկին-
քը երթալու ըլլամ նէ Մատուած պիտի
գիտցունէ ինծի , թէ որ ան բարեպաշտ
քրիստոնեայ մը ըլլայ նէ . ու մայր իմ ,
եղբօրըս հոգատարութիւն ընելու համար ,
կուզեմ որ իմ Մատուածաշունչս առնես ,
ու ուրիշ հին մըն ալ անոր հետ մէկ տեղ
դնես , ու իրեն խրկես , ու ըսես իրեն , որ
մէկալ հին Մատուածաշունչը կարգալ լը-
մընցունելէն ետև , իմինս ալ իրեն կրնայ
ըլլար :

Իր կեանքին վերջին շաբթրվան մէջ ը-
սաւ Սարիամ , աս շարչարանքները պինտ
շատ են . բայց կը յուսամ թէ վերջինն են
անոնք . ինծի քիչմը դժուար կուգայկոր
քեզմէ զատվել սիրելի մայրս սակայն կու-
զեմ որ պատրաստ ըլլաս շուտով երկինքը
գալու . կը յիշես նոյն կիրակի օրը , երբոր
պատուհանին քովը նստեր էի , ինչ խօսք
տուիր ինծի որ պիտի ընէիր . այն , սիրելի

Մարիամն կըլիշեմ ըսաւ մայրը . պիտի ընեն մի անիկա , նորէն հարցուց Մարիամ . պիտի աշխատիս բոլոր մեր դրացիներէրը բարի ու սուրբ ընելու համար , որ անոնք բոլորը բարեպաշտ ըլլան :

Իրիկուն մը երբոր իր վրայօքը կը խօսէին զինքը մեղքընալով , ըսաւ Մարիամ . ես չեմ ուզեր որ մարդիկ ինծի համար չարչարվող գառն կանչեն . ու ըսեն թէ որչափ կը չարչարվիս . ես էվելօք կուզեմ որ իս մէկ մեղաւոր մը կանչեն անոնք . ըսել չեմ ուզեր թէ ասանկ թող կանչեն իս , հասցա էվելօք կուզեմ որ իմ մեղաւոր ըլլալուս վրայ խօսին . ու պատմեն ինծի Փրկիչին չարչարանքներուն վրայօք , որ ան կըմոռցունէ իմ քաշած չարչարանքներս :

Նշգամ մը՝ որ օր մը իբրև անզգայ մնացեր էր , սթափելէն ետև ըսաւ . ժամը քանին է . սիրելի մայրս . հաց կերաք մի՞ . այո՛ ըսաւ մայրը . ու քիչ մըն ալ անցաւ , որ հիմայ գրեթէ գիշեր է . նորէն հարցուց Մարիամ թէ , վարագոյրները վեր կառնեն մի այսօր բարի քրիստոնեաներ չեկան հոս . այսօր երջանիկ օր մը չեղաւ ինծի . երբոր մայրը վարագոյրները բացաւ , որ լոյսը ներս զարնէ , դարձեալ ըսաւ Մարիամ . բայց երկինքը միշտ պայծառ պիտի ըլլայ՝ առանց մութնալու :

Մարտին տասնիրեքին կիրակի օրմը , որ

իր վերջին կիրակին եղաւ երկրի վրայ ,
 Մարիամ շատ սաստիկ տկար էր , ու
 կերեալ որ քիչ ժամանակ պիտի ապրի .
 նոյն օրը կէս օրէն ետեւ , քանի մը ժամ սաս-
 տիկ նեղութիւն քաշելէն ետքը քիչմը ա-
 ղէկցաւ . ու տեսան որ ուշադրութեամբ
 մը դէպի պատուհանը կրնայէր . ու իր
 դէմքն ալ՝ իբրև նոր կենդանութեամբ մը
 կրտայէր . ու վերջը ըսաւ . մայր , բան մը
 եկաւ միտքս որն որ շատ երջանկութիւն
 կուտայ ինձի . երբոր դէպի պատուհանը
 կրնայէի անանկ զգացի որ իբրև թէ կը
 բաղձամկոր թռչիլ , ու երկինքը երթալ ,
 անանկ արագութեամբ . ինտոր մէկը տաք
 կրակին մէջէն կելէ , ու ցուրտ տեղը կրվա-
 զէ :

Նոյն գիշերը սաստիկ դող մը բունեց , ու
 երբոր անցաւ ան , ըսաւ . ո՛հ , երանի թէ
 վերջինը ըլլար աս . մայրը ըսաւ . սիրելի
 Մարիամս , կարելի է որ , քեզ պիտի մաք-
 րէ աս , ու երկինքին համար պատրաստէ
 քեզ :

Մարիամ թէպէտ շատ դժուարու-
 թեամբ կրխօսէր , սակայն զրուցածը կը-
 հասկըցվէր , որ ըսաւ , կրցուսամ որ պատ-
 րաստըլած եմ : Մայրը ըսաւ . երջանկու-
 թիւն կըզգասկոր մի . այո՛ , շատ երջանկու-
 թիւն կըզգամ ըսաւ Մարիամ :

Ըս միջոցին Մարիամ շատ մեծ տառա-

պանքի մէջ էր , ու կերևար թէ մեռնելու վրայ էր :

Նոյն տիկինը քովը կեցած էր , ու հողմահարով շարունակ կրփչէր , ու տեսաւ որ , Վարիամին աչքերը այլ կերպ փոխվեցան , ուստի հարցուց իրեն . կրնանկոր տեսնալ սիրելի Վարիամ . չէ ըսաւ , ու դարձեալ ըսաւ թէ ո՛հ , ես կերթամկոր :

Ինչևիցէ աս դողալէն աղատեցաւ Վարիամ , ու երբոր կարող եղաւ խօսելու , իսկոյն ուղեց որ քովը եղող տիկինը աղօթք ընէ իրեն հետ : Երբոր ըսին թէ տուն գնաց , դարձեալ ըսաւ , ուրիշ մէկը թող աղօթք ընէ . ո՛հ , աղօթք ըրէք ինձի համար . իր նեղութիւնները այնչափ սաստիկ էին , որ կերևար թէ անկարելի բան էր որ ան գիշերը գլուխ հանէ :

Ինքը շատ անգամ ըսաւ . ես կերթամկոր . երկինքին մօտ եմ ես . շուտով հոն պիտի երթամ . անգամ մըն ալ երբոր կրկին բռնեց դողը , ըսաւ . սիրելի մայրս , ասոնք իմ սաստիկ դողերս են , ու կըլլուսամ որ վերջինն են անոնք :

Մայրը ըսաւ . մի՛ յուսահատիր սիրելիս , թէ որ անանկ չըլլայ ալ նէ . Աստուած կրնայ այլ ևս պահել քեզ , ալ էվելի նեղութիւն քաշելու համար . կըխորհիս որ հաճութեամբ պիտի տանիս անոնք . ան փոքրիկ չարչարվողը ըսաւ . այո՛ , մայր , թէ որ առաւել սուրբ կընէ իս , ու բողոր

իս տեսնողները , հաճու թեամբ կրտանիմ
անիկա : Անատենը դարձեալ ուզեց որ մե-
կը աղօթք ընէ . մայրը աղօթք ըրաւ իրեն
համար , ու երևաց որ սիրտը դիւրացաւ ,
ու մխիթարվեցաւ ինքը . անատենը երգեց
մայրը Մարիամին սիրական երգերուն մե-
կը :

Չեմ կրնար ժուժել հեռացմանդ՝ Տէր
կեանքս կրսպառի թէ որ հեռանաս
Ո՛վ սիրտ իմ դու միշտ Ա՛յս քով լին
Եւ դ՛ու Ա՛ճ՝ իմ սիրտըս չի թող տաս :

Ոչ երկրի համար ծնայ և մեղքի
Ոչ ալ սնոտեօք ես ապրիլ կրնամ
Իայց պիտի կենամ մինչ չայրս կամի
Երկինքին համար սպասեմ յուսամ :

Ուստի սիրուն Տէր , քու գիրկիդ մէջը
Թող յանձնեմ իմին սպառել շունչըս
Եւ իմ երեսիս խնդու թիւնովը
Թող անցունեմ ան մահուան մեծ ժամն :

Մարիամին կեանքին մնացած վերջին քա-
նի մը օրերը առջի անցած օրերուն պէս էին .
Թէպէտ սակայն կարելի է որ նեղութիւնը
շատցած էր շնչառութեան դժուարու-
թեանը պատճառաւ . կարդայը , երգելը ,
ու աղօթք ընելը՝ իրեն մեծ ուրախութիւն ,
ու մխիթարութիւն կուտային , որ ժամա-
նակ որ կարող կը լար մտիկ ընելու անոնք :

Վարիամին կեանքին վերջին իրիկվան ու գիշերվան մէջ եղածը , աղէկ կիմանանք ան տիկինէն , որն որ շատ սիրելի բարեկամ էր իրենց ընտանիքին , ու Վարիամին շունչը դադարած ժամանակն ալ հոն ներկայ էր :

Ինդճաբ[ժի օրը կէս օրէն ետև ժամը իննին ատենները , երբոր իր սենեակէն ներս մտայ , որն որ շատ օգտակար եղած էր ինձի . կերևար թէ ինքը մահուան կետին վրայ էր . ու խորհեցանք որ իր նեղութիւնները դադարած պիտի ըլլան . ուստի ծունր դրինք իր քովը , ու աղօթք ըրինք , իր բաժնըվելու հոգին Մատուծոյ յանձնելով , սակայն ինքը ոգի առաւ քիչ մը , ու իր նեղութիւնը դարձեալ սկսեց շարունակել , մինչև գիշերվան երկուքը : Երբոր ասանկ կաճէր իր ցաւը , որ արդարև աղէտալի տեսարան մըն էր զինքը աս ցաւագին վիճակին մէջ տեսնալը , ու լսելը իրմէն աս խօսքերը , որ իր տղայական պարզմտութեամբը կրէր . ո՛հ , երանի թէ կարող ըլլայի շունչ մը առնելու . ո՛հ , երանի թէ կարող ըլլայի հաղալու :

Իմ անուշիկ Վարիամս ըսաւ մայրը , ասնոյն ճամբան է , որով ան բարի եղբայրը գնաց երկինքը :

Ո՛հ , այո՛ , սիրելի մայրս ըսաւ Վարիամ . ես կըջանամ համբերող ըլլալ . հողմահարը քիչ մը արագ զարկ , ու քիչ

մը առաւել օգտուր ինձի, որ իմ կեանքս շուտով պիտի վերջանայ :

Եւ մը չորսին վրայօք մէկ առաւել ջերմեռանդութիւնով մը ըսաւ . խաթուն, եկոր, ու քովս ծունր դիր, ու աղօթք ըրէ Մատուծոյ, ջերմեռանդութեամբ աղօթք ըրէ . ու բարձր ձայնով զրուցէ : Երբոր սկսեցի ես աղօթել, ինքն ալ սկսեց հետս ջերմեռանդութեամբ, բոլոր սրտիւ ըսել, ազատէ իս, ո՛վ Մատուած :

Երբոր յառաջ գացի աղօթքիս մէջ, հասկըցայ որ ինքը քիչ մը հանդարտեցաւ . ուստի քիչ մալ առաւել շարունակեցի աղօթքս, որ շուտով պիտի աւարտէի :

Երբոր աղօթքնիս աւարտեցաւ, ինքը մէկ ազդու կերպով մը ըսաւ, ես բնաւ չի պիտի մոռնամ . “դուն մեծ մխիթարութիւն մը եղար ինձի սիրելիս”, դուն մեծ մխիթարութիւն մը եղար ինձի . Մատուած լսեց քու աղօթքդ, ու քիչ մը զօրացուց իս :

Քիչ մը անցնելէն ետեւ ուզեց որ մայրը իր բերնին թուրերը սրբէ, որն որ գրեթէ իր շնչառութիւնը կարգիլէր, ու բոլորովին ալ չէր կրնար վեր բերել . ասոր վրայ իսկոյն մէկ յայտնի բաղձանքով մը ըսաւ, կուզէի որ . . . խաթունը հոս ըլլար . ետեւէն մարդ խրկեցէք որ դայ . վասն զի աղօթք ընելու համար կուզէր անիկա . ուս-

տի մարդ խրկեցին ետևէն , ու շուտով
եկաւ իր էրկանը հետ , և մէկ տեղ աղօթք
ըրին . վերջը ուզեց որ քիչ մը երգեն :

Ով Յիսուս Փրկիչ իմ հոգւոյս սիրող և՛ :

Վիչ մը անցնելէն ետև յայտնի եղաւ
որ շնչառութիւնը դժուարացաւ սննեա-
կին մէջի մարդոց շատութենէն , ուստի մէկ
զարմանալի աննենդութեամբ մը ըսաւ
մօրը , թէպէտ ինծի մխիթարութիւն է ,
սակայն աղէկ է որ հիմայ երթան , աղէկ է
որ երթաք հիմայ :

Վ երջը երեցաւ որ քիչ մը հանգստա-
ցաւ , ու գիշերվան մինչև եօթնուկէսը
քնացաւ . վերջը նորէն քիչ մը աճեցաւ իր
նեղութիւնը , սակայն կերևար որ ինքը
մխիթարված էր , ինտոր որ բոլոր հիւան-
դութեանը մէջ ասանկ էր , որ կրմխիթար-
վէր , Սուրբ գիրքէն սիրած հատուածները
իրեն կարգալով , ու շարականներ երգե-
լով : Ինքը Վրիստոսի շարչարանքներուն
վրայ եղած շարականները յատկացուցեր
էր , ու կուզէր որ անոնց վրայօք լսէր . ու
մէկ կամ երկու անգամ մըն ալ ըսաւ , եր-
կինքին վրայ երգեցէք :

Ղուորվան ժամը տասնին դարձեալ
խնդրեց որ իրեն հետ աղօթք ընեմ , ու
երբոր աղօթքնիս լմընցաւ , ինքը ըսաւ .
նորէն աղօթք ըրէ , բոլոր ժամանակը ա-
ղօթք ըրէ . ասկէց քիչ մը ետև նաև ըսաւ
մայր ինծի եկուր , եկուր հիմայ իմ քովս

նստէ . հայրս կանչէ , կանչէ անիկա շուտով :

Իր ջերմեռանդ ու սրտառուչ եղանակէն յայտնի կերևար որ ինքը խորհեցաւ թէ բաժանման ժամը մօտ էր . իր նեղութիւնը շատ ըլլալուն համար , դժուարութիւն կուտար իրեն խօսելը . բայց երբոր լուծեամբ քովը նստանք սպասելու համար , իր նուազ ձայնը կը լսէինք , որ հեծեծալով մը կըսէր . սիրելի մայր , անուշիկ մայր , անուշիկ մայր . իր ձայնը հասածին չափ ասանկ ըսաւ :


Իր շնչառութիւնը շարունակեց մինչև որ առարկան երկուքը անցաւ , Մարտի 18 . (1831) ուրբաթ օրը . ու իր երջանիկ հոգին աւանդեց . որ ելաւ վեր դէպի իր Փրկիչին , որն որ այսչափ կըսիրէր , ու կը պատուէր ինքը :

Ես կըյարմարիմ Մատուածաբանութեան վարժապետ . պ . Կուռնելիոսին ըսածին , որն որ Մարիամին մեռնելէն քիչ մը ետև , ներս մտաւ , ու ըսաւ . երջանիկ մայր , երջանիկ մայր , ես չեմ կրնար ողբալ , հապա կուրախանամ քեզի հետ :

Փոքրիկ Մարիամին թաղումը եղաւ հետևեալ Աիրակի օրը , իր հոգևոր հովիւին ձեռօքը . իր երկրաւոր մարմինը հանգ-

չած է Տիմայ Պօսթրն մայրաքաղաքին
 իւսիսային կողմը եղած գերեզմանատանը
 մէջ, փառաւոր յարութեան մը սպասելով,
 անտարակոյս ու ճշմարիտ յուսով:

Իր հասակը էր վեց տարւան, ու իրեք
 ամիսէն ալ քիչ մը էվել. իր կեանքը մէկ
 երևելի բացայայտութիւն մըն էր ութե-
 րորդ Սաղմոսին երկրորդ հատուածին,
 որ կրտէ. «Սանկանց ու կաթնկեր տղայոց
 բերնէն գովութիւնդ կատարեցիր»:



Վ. Ե Ր Թ.



Այսին

~~Watt & Co. London~~
~~Watt & Co. London~~
~~Watt & Co. London~~
~~Watt & Co. London~~

~~Watt & Co. London~~

~~Watt & Co. London~~

~~Watt & Co. London~~

~~Watt & Co. London~~

~~Watt & Co. London~~

~~Watt & Co. London~~

175

~~175~~

